

## **ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՋ Գագիկ Տեր-Հարությունյան**

Հայտնի է, որ հայության մոտ երկու երրորդը բնակվում է ՀՀ սահմաններից դուրս: Անվիճելի է նաև, որ համաշխարհային հայության առկայությունը մեր լրջագույն ռեսուրսն է: Միեւնույն ժամանակ, ազգի նման կարգավիճակը ենթադրում է բազմաթիվ ներքին և արտաքին մարտահրավերներ, որոնց համարժեք պատասխաններ չունենալը հղի է անցանկալի զարգացումներով: Այդ մարտահրավերների էության բացահայտումը և դրանց հակազդեցության մեխանիզմների մշակումը հայության ամենահրատապ խնդիրներից են: Մինչդեռ տպավորությունն այնպիսին է, որ ներկայումս մեր ազգային ընտրանին դեռևս լիարժեքորեն չի տիրապետում նման կարգի համազգային խնդիրները լուծելուն անհրաժեշտ հասարակագիտական գիտելիքներին և քաղաքական տեխնոլոգիաներին:

Վերոնշյալի առիթով նկատենք, որ թեև ամենատարբեր երկրներում գտնվող հայկական համայնքները բազմադարյա պատմություն ունեն, սակայն այդ համայնքների ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում նկարագրական-պատմագրական ժանրում: Նման մոտեցման արժեքն, իհարկե, պետք է բարձր գնահատել, հաշվի առնելով, որ հայկական համայնքների պատմությունն, ընդհանուր առմամբ, հայոց պատմության կարեւոր բաղադրիչներից է: Հարկ է խոստովանել, սակայն, որ իրագործվել են ընդամենը սահմանափակ թվով հետազոտություններ հայրենիքից դուրս գտնվող հայության գործունեության ընդհանուր կամ մասնակի օրինաչափությունների բացահայտման վերաբերյալ: Չի դրվել նաև տեսական և կիրառական բնույթի որոշակի լուծումների մշակման խնդիրը, որոնք թույլ կտային բարձրացնել հայկական համայնքների գործունակությունը Հայաստանի և հայության ընդհանրական շահերի համատեքստում: Նման մշակումների բացակայությունը, ինչպես ցույց է տալիս հայկական համայնքների պատմությունը, բացասական դեր է խաղացել անցյալում: Ելնելով գլոբալ զարգացումների ներկա միտումներից՝ հայկական համայնքների նկատմամբ հայեցակարգված մոտեցումների բացակայությունը համազգային ռազմավարությունների մշակումը և իրականացումը, թերևս, դարձնում է անհնար:

Նոր մոտեցումների մշակումը, առաջին հերթին, ենթադրում է որոշակի ճշգրտումներ ու հստակեցումներ ընդունված եւ կիրառվող հասկացություններում եւ տերմինաբանությունում: Մասնավորապես, մեր Երրորդ հանրապետության ինքնիշխան կարգավիճակը եւ գլոբալացման արդի գործընթացները հրատապ են դարձնում Սփյուռք հասկացությունն ավելի լայն եւ տարողունակ հասկացությամբ (օրինակ՝ Հայություն կամ համաշխարհային Հայություն) փոխարինելու հարցը: Հօգուտ սրա է վկայում թեկուզ այն փաստը, որ հանրապետության տարածքից դուրս, բայց իրենց պատմական հայրենիքում ապրում են մեր բազմաթիվ հայրենակիցներ (ըստ որոշ գնահատականների՝ ոչ պակաս, քան 1 մլն), եւ դա վերաբերում է ոչ միայն Արեւմտյան Հայաստանի այլալեզու, այլադավան հայերին, այլեւ, օրինակ, Ջավախքի հայությանը: Մեր այս հայրենակիցներին «սփյուռքահայերի» կամ «արտասահմանում ապրող հայերի» շարքին դասելը սկզբունքորեն սխալ է եւ վիրավորական:

Հավանաբար, վերիմաստավորման կարիք ունեն նաեւ մի քանի այլ կարծրատիպեր եւս, որոնք այսօր տեղ ունեն մեր բառապաշարում եւ հետեւաբար՝ մտածողությունում: Օրինակ, սովորական է դարձել յուրաքանչյուր պատեհ կամ անպատեհ առիթով խոսել Հայրենիք–Սփյուռք կապերից: Իհարկե, Հայաստանն առանցքային հասկացություն է ամբողջ հայության համար, եւ առանց Հայրենիքի գաղափարի, կենսունակ համազգային հայեցակարգի ձեւավորումը սկզբունքորեն անհնար է: Սակայն Հայրենիք–Սփյուռք կապերի կամ հարաբերությունների էությունը ճշգրտման եւ լրացման կարիք ունի: Բոլոր դեպքերում, պետք է ընդունել, որ դրանք որակապես տարբերվում են խորհրդային իշխանության տարիներին առկա ձեւակերպումներից: «Կապերի ամրապնդման» վերաբերյալ պնդումը ենթադրում է միայն երկկողմանի, այսինքն՝ համայնքների ու Հայաստանի կապերի սերտացում. այնինչ, Հայություն հասկացությունը եւ արդի աշխարհակարգը թելադրում են համակարգային մակարդակի փոխհարաբերություններ, այն է՝ հարաբերություններ «բոլորը բոլորի հետ» սկզբունքով: Նման բարձր կազմակերպվածություն ենթադրող համակարգում անհրաժեշտ է փոխգործակցություն ոչ միայն համայնքի եւ Հայրենիքի, այլեւ առանձին համայնքների միջեւ նույնպես: Փոխգործակցության նման բարդ մեխանիզմը, ամենայն հավանականությամբ, թելադրում է նաեւ հարաբերությունների առավել հայեցակարգված եւ տեղեկատվական առումով հագեցած բովանդակություն: Այլ խոսքով՝ այս ոլորտում ավանդական հարաբերություններին հարկ է հավելել որոշակի

կոնցեպտներ, որոնք թույլ կտային ներգրավել համաշխարհային հայությանը գլոբալ ազգային նախագծերի իրականացման գործում:

Համաշխարհային հայությանն առնչվող՝ լուսաբանման կարոտ հիմնախնդիրների ցանկն, անշուշտ, կարելի է ընդլայնել: Նշենք թեկուզ, դեռևս լրջորեն չուսումնասիրված, հայկական համայնքների կյանքում որոշ ավանդական ինստիտուտների (օրինակ՝ հայ քաղաքական կուսակցությունների) ունեցած դերի նվազման գործընթացը եւ նոր հասարակական կազմակերպությունների ազդեցության աճը: Չափազանց կարելու է ճշգրտել նաեւ այն կառույցների կազմակերպական ցանցը, որոնք պետք է զբաղվեն Հայության հիմնախնդիրներով. պետք է կարծել, որ ցանցային այդ կառույցում զգալի տեղ պետք է հատկացվի հետազոտական-վերլուծական հաստատություններին:

Մեկ այլ հիմնարար խնդիր է, այսպես կոչված, ինտեգրման եւ ինքնության պահպանման հարցադրումի ներկայացումը փոխլրացման համատեքստում: Այս մոտեցումների հակադրումն անարդյունավետ է, եւ ինքնատիպության պահպանումը ենթադրում է ոչ թե գետոյական հոգեբանություն, այլ ձգտում՝ օտար հանրությանն ինտեգրվելով դուրս գալ դեպի համահայկական հարթություն:

**ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ  
ԿՐՈՆԱՓՈԽ ՉԱՅԵՐԻ ԽՆԴՐՈՒՄ  
Ռուբեն Մելքոնյան**

«Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»։ ուշագրավ այս միտքը պատկանում է հանգուցյալ Ջրանտ Դինքին։ Այս համատեքստում ամենեւին էլ պատահական չէր, որ Թուրքական պատմական ընկերության նախագահ, «պալատական» պատմաբան Յուսուֆ Չալաչօղլուի՝ սույն թվականի օգոստոսի 18-ին Կեսարիա քաղաքում կայացած սիմպոզիումի ժամանակ կրոնափոխ հայերի մասին արտահայտած մտքերն անմիջապես լայն արձագանք գտան թուրքական մամուլում եւ քաղաքական, գիտական, մտավորական շրջանակներում։ Հիշյալ սիմպոզիումում Չալաչօղլուն հայտարարել էր, որ Թուրքիայի քրդերի մեծ մասն ունի թուրքմենական ծագում, իսկ ալեւի քրդերն իրականում կրոնափոխ հայեր են, որոնք առերես իսլամ են ընդունել եւ փոխել իրենց անունները՝ 1915թ. «տեղահանությունից» ազատվելու համար. «Այսօր բազմաթիվ մարդիկ, որոնք հայտնի են որպես քուրդ ալեւի, ցավոք սրտի, հավատափոխ հայեր են։ Մեր երկիրը մասնատել ձգտող PKK եւ TIKKO<sup>1</sup> ահաբեկչական կազմակերպության անդամներից շատերը հենց այս հայերն են։ Այսինքն, ինչպես եւ մենք կարծում էինք, PKK-ն եւ TIKKO-ն իրականում քրդական շարժումներ չեն»։

Այս խոսքերն անմիջապես ունեցան տարաբնույթ արձագանքներ։ Բազմաթիվ կառույցներ, քաղաքական գործիչներ, կազմակերպություններ հանդես եկան ի պաշտպանություն «հալածյալ» Չալաչօղլուի եւ ընդդեմ նրա նկատմամբ «Լինչի դատաստանի»։ Չալաչօղլուի դեմ հանդես եկան մի շարք ալեւիական կազմակերպություններ, մտավորականներ, պատմաբաններ՝ նրան որակելով ռասիստ, ոչ օբյեկտիվ եւ անհիմն խոսող «գիտնական»։ Օրինակ՝ հայտնի գրող եւ լրագրող Մուրաթ Բելգեն արտահայտեց այն միտքը, թե իսլամ ընդունելու միջոցով փրկված այդ հայերի

---

<sup>1</sup> PKK – քրդական բանվորական կուսակցություն, TIKKO – Թուրքիայի բանվորների եւ գյուղացիների ազատագրության բանակ, որը ձախ ծայրահեղական կազմակերպություն է։

նման քայլը պատկերացում է տալիս, թե ինչ է եղել նրանց հետ, ովքեր չեն դիմել այդ քայլին: Փորձելով հակադարձել իր դեմ սկսված քննադատության ալիքը՝ Հալաչօղլուն հավելեց նաև, որ ունի իսլամացած հայերի ցուցակը եւ տիրապետում է նրանց մասին մանրամասն տվյալների: «Իմ ձեռքին կան 100 հազար կրոնափոխ հայերի մասին մանրամասներ. նրանց նախկին հայկական անունը, թուրքական անունը, բնակության վայրը եւ այլն», – հայտարարել է նա՝ միեւնույն ժամանակ ասելով, որ դա չպետք է ընկալվի որպես սպառնալիք: Բացի այդ, ըստ Հալաչօղլուի՝ ինքը եւ իր ղեկավարած թուրքական պատմական ընկերությունը «Հայոց ցեղասպանության պնդումների դեմ մի ամրոց են», եւ ներկայումս նա իր աշխատանքներում փորձում է տալ հայկական կողմի այն հարցի պատասխանը, թե ուր են մինչեւ 1915թ. այդ տարածքներում ապրող 1 500 000 հայերը: Պատմակեղծարարը գտնում է, որ իսլամացած հայերի մասին իր այդ «գիտական աշխատանքը» հենց այս հարցի պատասխանն է, եւ մատնացույց անելով մահից փրկվելու համար ստիպված իսլամ ընդունած հայերին՝ ասում է. «Ահա այդ «անհետացած» հայերը, նրանք չեն կոտորվել, եւ նշանակում է, որ հայկական կողմը մինչեւ այսօր սուտ է խոսել: Իմ ասածներն ուղղակի ոչնչացնում են հայկական սփյուռքի պնդումները»:

Թուրքիայում ապրող իսլամացած հայերի խնդիրը մի կարելուր մասն է կազմում էթնիկ ինքնության պրոբլեմի, եւ բնական է, որ թուրքական պետական քարոզչամեքենան ամեն կերպ փորձում է այդ թեման օգտագործել հօգուտ իրեն: Ավելորդ չէ նշել, որ իսլամացած հայերի խնդրի այսօրինակ շահարկումը, փաստերի խեղաթյուրումը եւ նման անտրամաբանական եզրակացության հանգելը սպասելի էին շատերի, համենայնդեպս՝ մասնագետների համար: Սակայն կարելուր է դիտարկել, որ Հալաչօղլուի պնդումները լուրջ չեն ընկալվում նաև որոշ թուրք պատմաբանների կողմից, եւ կարծում ենք՝ այստեղ ավելորդ չէ մեջբերել հայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամի հետեւյալ միտքը. «1915 թվականին իրենց կյանքը փրկելու համար որոշ հայեր ընդունել են մուսուլմանություն: Սրան սկզբնապես թույլտվություն է տրվել, սակայն հետո, երբ գնալով ավելի մեծ թվով հայեր սկսեցին իսլամ ընդունել, հատուկ հրամանով արգելվեց կրոնափոխությունը»: Ավելին, օսմանյան արխիվներում պահպանվել են ժամանակի բարձրաստիճան շատ թուրք պաշտոնյաների, առավելապես ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի, Հայոց ցեղասպանության տարիներին հայերի կրոնափոխու-

թյանը վերաբերող հրամանները եւ գրագրությունը: Այսպես, 1915թ. հունիսի 1-ին տարբեր նահանգապետարաններ եւ գավառապետարաններ ուղարկած հրամանում թալեաթը պահանջում է հաշվի չառնել կրոնափոխությունը եւ նախապես որոշված վայրեր աքսորել նաեւ իսլամ ընդունած հայերին:

Թուրքիայի «Փերի» հրատարակչության սեփականատեր Ահմեթ Օնալը, ով ծնվել է Բինգյուլի Քըղի գավառի, ներկայումս Դոշլուջե անունով, նախկին հայկական Սըղանք գյուղում եւ որի տատը հայուհի է, հաստատելով այն փաստը, որ Հայոց ցեղասպանության ժամանակ իրոք որոշ հայեր իսլամ ընդունելու միջոցով փրկել են իրենց կյանքը, ասում է. «Իհարկե, որոշ հայեր փրկվել են՝ ներկայանալով քուրդ ալեւի: Օրինակ, Դերսիմի Մալազգիրթ գավառի Գարսանլար աշիրեթում կան հայեր, որոնք ողջ են մնացել, քանի որ ներկայացել են որպես քուրդ ալեւի, սակայն այս փաստը հնարավոր չէ ընդհանրացնել»: Իսկ Թուրքիայում մեծ ճանաչում ունեցող «Թոփլունսալ թարիհ» ամսագրի նախկին խմբագիր Օսման Քոքերը նշում է, որ հայերն իսլամացվել են ոչ միայն 1915-ին, այլեւ սկսած այն ժամանակվանից, երբ թյուրքերը հայտնվել են Անատոլիայում: Քոքերը նույնպես անհիմն է համարում Հալաչօղլուի պնդումները եւ կարծիք հայտնում, որ առնվազն անլուրջ է կարծել, թե հայերը կարող էին փրկվել այդպիսի պարզունակ միջոցով, այն է՝ հայտարարելով, թե քուրդ են կամ ալեւի: Ըստ նրա՝ պետությունը մանրամասն գիտեր, թե որ գյուղերն են հայկական, որոնք՝ քրդական: Քոքերը պնդում է նաեւ, որ հայ կանանց եւ որբերի իսլամացումը այն ժամանակվա պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է եղել:

Հայտնի փաստ է, որ որոշ հայեր իսլամ ընդունելու միջոցով փրկվել են կոտորվելուց, բայց Հալաչօղլուի պնդումները, թե այդպիսով հայերն ազատվել են կոտորածից եւ ցեղասպանություն չի եղել՝ դուրս է ոչ միայն գիտականության, այլեւ տրամաբանության սահմաններից: Գալով քուրդ ալեւիների, զազաների շրջանում կրոնափոխ հայերի առկայության խնդրին՝ նշենք, որ դա հաստատող փաստեր կան, եւ 1915թ. Հայոց ցեղասպանության տարիներին, իրոք, բազմաթիվ հայեր (տարբեր տվյալներով՝ 20-50 հազար) ապաստան են գտել Դերսիմի ալեւիների մոտ: Հատկապես Դերսիմի ընտրությունը, ըստ տարբեր հեղինակների, պայմանավորված էր այն հանգամանքով, որ պատերազմի մեջ գտնվող օսմանյան բանակը շատ մեծ վերահսկողություն չի ունեցել այդ տարածքների վրա, ինչն էլ հնարավորություն է տվել տեղացիներին պատսպարել հայերին:

Թուրքիայի դերսիմցի ալեւիների հետ մեր անձնական շփումների արդյունքում տեղեկացել ենք, որ, օրինակ, մինչեւ այսօր էլ նրանց շրջանում տարածված է մի դարձվածանման միտք՝ «Մեր տան հայը», որը կարելի է ընդունել հայերին իրենց տներում ապաստան տալու ուղղակի վկայություն եւ հիշողություն:

Ուշադրության արժանի է նաեւ Հալաչօղլուի հայտարարության առաջացրած արձագանքների մեկ այլ նրբերանգ եւս: Պատմակեղծարարը հայտարարել էր, որ ունի հայ հավատափոխների ցուցակները, որոնք պատրաստվել են բժախնդրությամբ, ավելին՝ «պետությունը տուն առ տուն շրջելով արձանագրել է այս մարդկանց»: Հարցը հետաքրքիր ենթատեքստ է ձեռք բերում նաեւ այն պատճառով, որ Հալաչօղլուն խուսափում է նշել կոնկրետ աղբյուրը: Բնականաբար, հարց է ծագում. եթե այդ մարդկանց արձանագրել է պետությունը, ապա դա պետք է արված լիներ պետական օղակների եւ դրանց հատկացված գործառույթների միջոցով: Իսկ մարդկանց արձանագրելու ընդունված տարբերակներից է մարդահամարը: Ինչպես վկայում են տարբեր փաստեր, թուրքական պետությունը միշտ ուշադրության կենտրոնում է պահել կրոնափոխ կամ ծպտյալ հայերի խնդիրը եւ պարբերաբար մանրամասն ուսումնասիրություններ իրականացրել:

Հայտնի է, որ Թուրքիայում առաջին անգամ մարդահամար անցկացվել է 1927թ., որից հետո՝ սկսած 1935-ից, որոշում է ընդունվել մարդահամար անցկացնել հինգ տարին մեկ: Սակայն թուրքական աղբյուրներում հանդիպում ենք տվյալների, որոնք ապացուցում են, որ, օրինակ, 1935թ. Թուրքիայում անցկացվել են նաեւ կրկնակի մարդահամարներ: Այսպես, թուրքական «Ռեֆերանս» թերթի 2007թ. սեպտեմբերի 8-ի համարում, Բահադիր Օզգյուրի վերլուծական հոդվածում մեջբերված են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արձանագրությունների մատյանում պահվող հետեւյալ փաստերը. 1934թ. մայիսի 29-ին Թուրքիայի մեջլիսն ընդունել է թիվ 2465 օրենքը, որով նախատեսվում էր 1935թ. մարդահամար անցկացնել: Սակայն ուշագրավ է, որ դրանից մոտ մեկ ամիս անց նույն մեջլիսն ընդունել է թիվ 2576 օրենքը «զաղտնի բնակչության» մարդահամարի մասին, որն ուժի մեջ է մտել նույն թվականի հունիսի 15-ին: Այսպիսով, անցկացվել է երկու տեսակի մարդահամար, եւ «զաղտնի բնակչության» մարդահամարն ավարտվել է 1935թ. հուլիս ամսին, իսկ «համընդհանուր»-ն անցկացվել է նույն թվականի հոկտեմբերին: Վերոնշյալ օրենքը բաղկացած է եղել 12 հոդվածից, որոնցից առաջինը

պահանջում էր, որ բոլորը 1.5 ամսվա ընթացքում տեղեկացնեն իրենց տանը կամ ենթակայության տակ գտնվող գաղտնի բնակչության մասին, չորրորդ հոդվածը 1-10 լիրա պատիժ էր սահմանում ճիշտ տեղեկություն չտվողների համար: Բնականաբար, «գաղտնի բնակչության» մարդահամար անցկացնելու պաշտոնական պատճառաբանությունը բավական տրամաբանական էր, եւ չենք էլ բացառում, որ այդ մարդահամարներն իրոք ունեցել են նաեւ զուտ բնակչության իրական քանակը որոշակիացնելու նպատակ: Սակայն միամտություն կլինի կարծել, թե այս «գաղտնի բնակչության» մարդահամարի ընթացքում լրացուցիչ չի ճշգրտվել մուսուլմանների մոտ ապաստանած կամ հետագայում իսլամ ընդունած հայերի թվաքանակը: Պետության կողմից մանրամասն փաստեր հավաքելը, հատկապես Ղերսիմ նահանգում ապրող կրոնափոխ հայերի մասին, մեր կարծիքով՝ ունեցել է կոնկրետ նպատակ: Հայտնի է, որ 1938թ. թուրքական պետությունը կազմակերպել է կոտորած Ղերսիմում, եւ պատմելով այդ մասին՝ մեր զրուցակից դերսիմցի շատ ալեւիներ մեջբերում էին իրենց ավագներից ու կոտորածի ժամանակակիցներից լսածները, որոնց համաձայն՝ այդ ժամանակ թուրքական բանակի թիվ մեկ թիրախը 1915-ին այնտեղ ապաստան գտած հայերն էին: Ինչպես նշեց մի տարեց զրուցակից, «1915-ին կիսատ թողածը շարունակեցին 1938-ին, եւ այդ կոտորածի ժամանակ սպանվեցին բավական մեծ թվով կրոնափոխ հայեր»:

Նույն թաներ Աբջանը նշում է, որ թուրքական պետությունը հենց սկզբից է միջոցներ ձեռնարկել ցեղասպանության տարիներին իսլամ ընդունած հայերին հետագայում տարբերակելու համար, եւ, օրինակ, համապատասխան մարմիններից պահանջվել է գրանցամատյաններում այդ հայերի անունների դիմաց հատուկ նշումներ անել եւ անձնագրերը լրացնել այնպես, որպեսզի հասկացվի նրանց հավատափոխ լինելը: Բնականաբար, դժվար է այս կարծիքի հետ չհամաձայնելը, քանի որ Հայոց ցեղասպանությունն ամենայն մանրամասնությամբ ծրագրել եւ իրականացրել է թուրքական պետական մեքենան: Միաժամանակ, անվիճելի է այն իրողությունը, որ Թուրքիայում հայերը՝ լինեն բացահայտ, ծպտյալ թե իսլամացած, միշտ գտնվել են պետության լուրջ հսկողության ներքո եւ ընկալվել որպես պոտենցիալ վտանգ: Սա է փաստում նաեւ մի ուշագրավ տվյալ, որը բոլորովին վերջերս հայտնվեց թուրքական մամուլում: Հայտնի է, որ 1980թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում իրականացվեց ռազմական հեղաշրջում եւ իշխանությունն անցավ բարձրաստիճան զինվորականներից կազմված Ազգային անվտանգության խորհրդի



ձեռքը, որը տեղերում նշանակեց արտակարգ դրության հրամանատարներ, որոնք օժտված էին անսահմանափակ լիազորություններով: Թուրքական «Ռադիկալ» թերթի սույն թվականի հոկտեմբերի 4-ի համարում տպագրված հոդվածում մեջբերված է 1982թ. սեպտեմբերի 8-ի թվագիր մի փաստաթուղթ, որով արտակարգ դրության հրամանատարությունն անվտանգության ծառայությունից պահանջում է տարածքներում ստուգել, թե արդյոք կան հայեր կամ հայկական ծագմամբ մարդիկ, եւ եթե կան, ապա արձանագրել նրանց ու վերցնել հսկողության տակ: Նույն հոդվածում թուրքական անվտանգության ծառայության նախկին մի աշխատակից խոստովանում է. «Արտակարգ դրության հրամանատարությունից մեզ գրավոր հրաման եկավ: Մենք ուսումնասիրեցինք մեր պատասխանատվության տակ եղած շրջանը, հարցրինք, թե արդյոք այնտեղ կան հայկական ծագում ունեցող քաղաքացիներ: Արտակարգ դրության ժամանակաշրջանն էր, բոլորը վախենում էին, եւ քանի որ հայերը համարվում էին «անջատողական», ուստի ոչ ոք չէր համարձակվում թաքցնել, եւ եթե կային, ապա հայտնում էին»:

Չետաքրքիր եւ կարեւոր է դիտարկել Թուրքիայի կրոնափոխ հայերի խնդրի հրապարակայնացման արդեն նկատվող արձագանքները հենց իսկանացած հայերի շրջանակներում: Տասնամյակներ շարունակ իրենց իրական ինքնությունը թաքցրած կրոնափոխ հայերը կամ ավելի են ինքնամեկուսանում, կամ էլ հակառակը՝ գոտեպնդվում են այս ընդհանուր ալիքից, եւ նրանց գիտակցության մեջ որոշակի գործընթաց է սկսվում: Չենց դա են վկայում կրոնափոխ հայերի շրջանում վերջերս նկատվող որոշ երեւոյթներ:

Արդեն բավական վաղուց է, որ Ստամբուլում տպագրվող «Ակոս» շաբաթաթերթում հանդիպում են տարբեր հայտարարություններ, պատմություններ, որոնք կապված են կրոնափոխ հայերի հետ: Նրանցից շատերը համարձակություն են ունենում հրապարակել իրենց ընտանիքների պատմությունները եւ փնտրել ազգականներին: Կրոնափոխ հայերի ինքնախոստովանական պատմությունները դարձել են նաեւ թուրքական մամուլի հետաքրքրության առարկան: Օրինակ, «Յենի Աքթուել» հանդեսի վերջին՝ 116 եւ 117-րդ համարներում տեղ է գտել մի նյութ, որտեղ ներկայացված կոնկրետ մարդիկ համարձակություն են ունենում խոստովանել իրենց հայկական ծագման մասին, եւ քանի որ նրանց խոսքերը փաստացի հաստատումն են այն տեսական պնդումների, որ մենք ներկայացրել ենք, ուստի հարմար ենք գտնում մեջբերել դրանցից

մեկը: Այսպես, համշենցի Քամիլ Մութին, ով 25 տարի զբաղվում է փաստաբանությամբ, ասում է. «Ոմանք պնդում են, թե համշենցիները Միջին Ասիայից եկած թյուրքական ցեղերից են, սակայն ես կարծում եմ, որ դա այդպես չէ», եւ շարունակելով իր միտքը՝ որպես հայկական ծագում ունենալու ամենացայտուն գործոն է ներկայացնում լեզուն, այսինքն՝ Չամշենի բարբառը, որը դեռ օգտագործվում է: Ըստ նրա՝ համշենցիների մեծ մասը, գոնե արտաքուստ, մերժում է իր հայ լինելու մասին պնդումները, եւ դա կապված է այն հանգամանքի հետ, որ Թուրքիայում հայ լինելը կամ հայկական ծագում ունենալն ընկալվում է որպես վիրավորանք: «Մինչ այժմ շարունակ ուրիշներն են մեր անունից խոսել: Պետք է ի հայտ հանել համշենցիների հայկական ծագում ունենալու մասին իրականությունը եւ տեր կանգնել այդ իրականությանը: Սակայն մեր ժողովուրդը վախենում է հասարակության կողմից օտարացվելուց, եւ մեր հայկական ծագում ունենալը չպետք է պատճառ դառնա, որ մեզ մեկուսացնեն», – գտնում է համշենցի փաստաբան Քամիլ Մութին:

Ինչպես ցույց են տալիս վերոնշյալ փաստերը, Թուրքիայում կրոնափոխ հայերի խնդրի հրապարակայնացումը պատճառ է դառնում տարաբնույթ եւ, միեւնույն ժամանակ, հետաքրքիր բացահայտումների:

## **ԹՈՒՐՔ ԳՐՈՂԸ ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Գերմանիայում բնակվող թուրք գրող Քենալ Յալչընի հարցազրույցը հատուկ «Հանրապետական» ամսագրի համար**

Հայտնի է, որ նորագույն շրջանի թուրք գրականությունը գրեթե չի անդրադարձել Հայոց ցեղասպանության, իսլամացած հայերի թեմային, եւ միայն վերջին մի քանի տարիներին է, որ այդ ուղղությամբ որոշակի շարժ կա: Լույս են տեսել եւ ներկայումս էլ շարունակում են տպագրվել հիմնականում փաստագեղարվեստական բնույթ ունեցող գրքեր՝ նվիրված հիշյալ թեմաներին: Ակնհայտ է նաեւ, որ այդ ստեղծագործությունները շատ դեպքերում պարունակում են որոշակի քաղաքական եւ քարոզչական ենթատեքստեր:

Գերմանաբնակ թուրք գրող Քենալ Յալչընը առաջիններից է թուրք հեղինակներից, որ անդրադարձել է հայկական թեմատիկային, մասնավորապես, իսլամացած ու ծպտյալ հայերին: Հայերեն թարգմանությամբ լույս է տեսել նրա՝ «Քեզ հետ է ուրախանում սիրտս» փաստագեղարվեստական վեպը, որն արդեն թարգմանվել է մի քանի լեզուներով: Նշենք, որ այդ գրքից հետո Քենալ Յալչընը հեղինակել է եւս երկու գիրք, որոնք ունեն նույնանման բովանդակություն եւ ուղղակի կամ անուղղակի վերաբերվում են Հայոց ցեղասպանությանն ու իսլամացած հայերին: Վերջերս մեր խնդրանքով գրողը հարցազրույց է տվել «Հանրապետական» ամսագրին, որը ներկայացնում ենք ստորեւ:

**Ռ. Մ.**

**Հարց**– Մեծարգո պարոն Յալչըն, հայ ընթերցողները «Քեզնով է ուրախանում սիրտս» գրքի շնորհիվ արդեն ծանոթ են Ձեզ: Հետաքրքիր է իմանալ, թե ինչու եք ընտրել հատկապես հայկական թեմատիկան:

**Պատ.**– Շատ ընթերցողներ հարցնում են. «Դու հայկական ծագում ունես եւ դրա՞ համար ես արդյոք հայերին վերաբերվող գրքեր գրում»: Այսպիսի հարցերին միշտ նույն պատասխանն են տվել եւ այժմ Ձեր հարցին էլ են նույն պատասխանը տալիս: Ես թուրք ծնողների, սուննի մուսուլման ընտանիքի զավակ եմ: Ինչքան որ ես գիտեմ՝ իմ ազգ ու տակում հայ կամ էլ քրիստոնյա, գրիգորյան հավատքի ազգական չունեմ: Հայերի հետ պատահած մեծ աղետը, Անատոլիայի հույների ապրած աղետը, ցավն ուսումնասիրելու, պատմական ճշմարտու-

թյուններն ի հայտ հանելու եւ գրելու համար բավական է լինել խղճի տեր մարդ: Ես նախ եւ առաջ որպէս մարդ եմ ուսումնասիրել այս թեմաներն ու գրել, գրքեր հրատարակել:

Ես նախնական, միջնակարգ եւ բարձրագույն կրթությունն թուրքիայում եմ ստացել: Թուրքական ազգային կրթության սկզբունքների համաձայն գրված պատմության դասագրքերն եմ կարդացել: Ոչ միջնակարգ դպրոցում եւ ոչ էլ բուհում հայերի, ասորիների, հույների եւ մյուս ոչ մուսուլման ժողովուրդների հետ պատահած աղետների մասին չեմ կարդացել: Պատմության դասերի ժամանակ մեզ ասվում էր. «Օսմանցիների հացը ուտող հայերը եւ հույները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությանը թիկունքից հարվածեցին, դավաճանեցին: Օսմանցիներն էլ՝ իրավացի լինելով, նրանց անհրաժեշտ պատասխանը տվեցին»: Ոչ միայն ոչ մուսուլման ժողովուրդների գոյության, այլեւ ավելիների, քրդերի, քրդերի գոյության մասին անգամ կարգին չգիտեինք: Ես դպրոցներում ձեւավորվել էի հետեւյալ գաղափարով. «Թուրքը բացի թուրքից ուրիշ բարեկամ չունի»: Դպրոցական կյանքից, դասերից դուրս իմ կարդացած գրքերի շնորհիվ սկսեցի իմանալ ճշմարտությունները: Համալսարանական տարիներին եւ դրանից հետո չնայած հարում էի ձախակողմյան շարժումներին, սակայն այս հարցերով շատ չէի հետաքրքրվում: Մենք գոչում էինք. «Բոլոր երկրների բանվորներ եւ ճնշվող ժողովուրդներ, միացե՛ք», Վիետնամի, Հարավային Աֆրիկայի, Պաղեստինի, Լատինական Ամերիկայի ժողովուրդների ազատագրության համար գրում-կարդում էինք, սակայն օրինակ, Ստամբուլի Քունքափը թաղամասի ուսանողական հանրակացարանի (ուր երկու տարի մնացել եմ) անմիջապես կողքին ապրող հայերի գոյության մասին տեղյակ չէինք, համենայնդեպս՝ ես:

Երբ 1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո եկա Գերմանիա, սկսեցի ազատվել այդ միակողմանի, սխալ գաղափարներից: Եվ այս հարցում ինձ վրա ամենամեծ ազդեցություն ունեցած մարդը Մելինե անունով թուրքերենի ուսուցչուհին էր, որի հետ ես ծանոթացա ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ժամանակ: Հայազգի Մելինեն մեզ՝ թուրքերենի ուսուցիչներին, սովորեցնում էր Գերմանիայում թուրքերեն դասավանդելու առանձնահատկությունները: Դասընթացների ընթացքում իմ եւ Մելինեի միջեւ ջերմ բարեկամություն ձեւավորվեց, ես սկսեցի հետաքրքրվել Մելինեի կյանքով, նրա անցյալով: Երբ ուսումնասիրում էի Մելինեի կյանքը, հասկացա, որ նրա ապրած ցավն իրականում հայերի ապրած ցավերի միայն մի կաթիլն է: «Քեզնով է ուրախանում սիրտս» փաստագրական վեպս 1994 – 2000թթ.

ընթացքում իմ արած ուսումնասիրությունների արդյունքն է: Մինչ օրս այն թարգմանվել է ութ լեզվով: Ես կիսուն եմ հայ ազգի ցավերը եւ դրանք համարում նաեւ իմը:

*Չարդ* – Վերջին ժամանակներս ավելի շատ է քննարկվում Թուրքիայում ապրող ծպտյալ կամ իսլամացած հայերի խնդիրը: Ըստ Ձեզ՝ սա ինչի՞ հետ է կապված:

*Պատ.* – Թուրքիայում վերջին 10-15 տարիներին սկսել են տաբուները քանդվել: Լույս տեսան եւ շարունակում են տպագրվել մեծ թվով հետազոտություններ, վեպեր, որոնք չեն արտահայտում պաշտոնական պատմագրության տեսակետները: Ինչքան շատ է քննարկվում ինքնության հարցը, այնքան ավելի շատ մարդ է սկսում ուսումնասիրել, փնտրել իր արմատները, ցեղը, ինքնությունը: Ֆեթիյե Չեթինի նման մարդիկ իրենց ցեղի, ընտանիքի մասնավոր պատմությունը գրեցին, հրատարակեցին: Այս տիպի գրքերը գնալով ավելանում են: Սակայն պետական համապատասխան կառույցները հենց սկզբից ի վեր հետեւել եւ հետեւում են ծպտյալ հայերին, հավատափոխներին, իսլամացած հայերին, ասորիներին, հույներին: Վերջերս թերթերը գրել էին, որ 1980թ. հեղաշրջումից անմիջապես հետո զինվորական խունտայի ներկայացուցիչները մի հրաման էին արձակել, որը պահանջում էր հետեւյալը. «Ձեր թաղամասի, շրջապատի հայերին, հույներին ուսումնասիրեք եւ հսկողության տակ վերցրեք»: Եվ Թուրքական պատմական ընկերության նախագահի հայտարարությունը, թե «իսլամացված, կոռնափոխված հայերի անունները, տվյալները անուն առ անուն, հայտնի են, եւ նրանց ցուցակը ձեռքումս է»՝ ոչ այլ ինչ է, քան պետության գաղտնի ծառայությունների երկար ժամանակ ի վեր կատարած աշխատանքի պաշտոնական բացահայտում: Այս հայտարարությունն իրականում սպառնալիք էր ծպտյալ կամ բացահայտ հայ քաղաքացիների նկատմամբ, որոնք ապրում են Թուրքիայում կամ էլ արտասահմանում:

*Չարդ* – Ինչպես հայտնի է, Եվրոպայում էլ Թուրքիայից արտագաղթած ծպտյալ եւ իսլամացած հայեր կան: Նրանց մասին մանրամասն կարո՞ղ եք պատմել:

*Պատ.* – Ճիշտ է, Եվրոպայում Թուրքիայից արտագաղթած իսլամացած հայեր կան, սակայն ես նրանց հստակ թիվը չգիտեմ: Այս հարցում Գերմանիայի հայ համայնքն ավելի մանրամասն տվյալներ կարող է տալ:

*Հարց* – Իսկ Եվրոպայում ծպտյալ հայերը շարունակո՞ւմ են իրենց ինքնությունը թաքցնել:

*Պատ.* – Իմ հետազոտությունների ընթացքում շատ իսլամացած, ծպտյալ հայեր կան էլ, այսպես կոչված, «մերոնք»<sup>1</sup>, որոնք ազգականներ, մերձավորներ ունեն թուրքիայում, պատմել են, որ նույնիսկ Գերմանիայում նրանք ստիպված են եղել երկար ժամանակ իրենց ինքնությունը թաքցնել: Շատ հայեր դեռ վախենում են, որ Ստամբուլի, Անատոլիայի իրենց մերձավորի, եղբոր, ընտանիքի հետ կարող է փորձանք պատահել: Այս վախի պատճառով էլ նրանք լռում են, թաքցնում իրենց իրական ինքնությունը: Այս վախը ոչ միայն Եվրոպայում ապրող թուրքահայերի շրջանում է տարածված, այլևս դեռ առկա է նույնիսկ հեռավոր Արգենտինայում ապրող որոշ թուրքահայերի շրջանում:

*Հարց* – Եվրոպայի ծպտյալ հայերն իրենց որպես հայ համարո՞ւմ են, կա՞ն արդյոք կրոնադարձության դեպքեր, ներքին ամուսնությունները դեռ պահպանվո՞ւմ են:

*Պատ.* – Ծպտյալ հայերի շրջանում, լինի թուրքիայում թե Եվրոպայում, կան քրիստոնեության վերադարձողներ: Ես ճանաչում եմ մարդկանց, որոնք նույնիսկ 40 տարեկանից հետո կնքվել են: Ծպտյալ հայերի շրջանում ներկայումս էլ դեռես գերակշիռ թիվ են կազմում ներքին ամուսնությունները:

*Հարց* – Ինչպիսի՞ն են Եվրոպայի ծպտյալ հայերի հարաբերություններն այնտեղի մյուս հայերի հետ:

*Պատ.* – Ես նկատել եմ, որ թուրքիայի հայերի եւ Հայաստանի հայերի միջեւ մտածելակերպի, քաղաքական հայացքների, դիրքորոշման եւ կենսաձեւի տեսանկյունից որոշ տարբերություններ կան: Սակայն սրա չափերը, ընդգրկումը չեն ուսումնասիրել եւ քննել: Ես կարծում եմ, որ այս հարցերում հայկական համայնքները, կուսակցությունները եւ կազմակերպություններն ավելի շատ տեղեկությունների են տիրապետում:

---

<sup>1</sup> «Մերոնք»-ը կամ թուրքերեն *bizimkiler*-ը այն անվանումն է, որով ծպտյալ հայերը կոչում են իրենք իրենց, եւ սա արվում է նաեւ անվտանգության նկատառումներից ելնելով (Ռ. Մ.):

*Չարք* – Թուրք որոշ գիտնականներ ծպտյալ եւ իսլամացած հայերին համարում են սպառնալիք Թուրքիայի համար: Այս մասին ի՞նչ եք մտածում:

*Պատ.* – Ես ընդհանրապես չեմ կարծում, թե բռնությամբ, վախով կրոնը փոխած, իրական ինքնությունը թաքցրած մարդիկ Թուրքիայի համար սպառնալիք են: Այն մարդը միայն, ով կարողանում է ազատորեն պահպանել իր ինքնությունը, կարող է իսկապես սիրել այն պետությունը, երկիրը, որտեղ նա ապրում է: Այն հասարակությունում, որտեղ խաղաղության մշակույթը կյանքի է կոչվել, կրոնական, լեզվական, մշակութային տարբերությունները վերածվում են հարստության աղբյուրի: Կարճ ասած՝ մի մրգով այգի չի լինում: Ես այս իրականությունը հասկացել եմ՝ ապրելով Գերմանիայում որպես թուրք փոքրամասնության ներկայացուցիչ: Եվրոպայում փոքրամասնություններին տրված եւ օրենքներով երաշխավորված իրավունքները Եվրամիությանն անդամակցել ցանկացող Թուրքիայում էլ կարող են կյանքի կոչվել: Ահա այդ ժամանակ Թուրքիան բոլորովին այլ Թուրքիա կարող է դառնալ:

*Չարք* – Մտածո՞ւմ եք արդյոք այս թեմայով նոր գրքեր գրել:

*Պատ.* – Ես «Պահ տված օժիտը» փաստագրական վեպով 1998թ. ստացել եմ Աբդի Իփեքչիի անվան Բարեկամության եւ խաղաղության հատուկ մրցանակ, իսկ 1999թ.՝ Թուրքիա–Հունաստան բարեկամության եւ խաղաղության մրցանակ: Այս մրցանակներն ինձ պարտավորեցնում են Թուրքիայում եւ աշխարհում խաղաղության ու բարեկամության զարգացման համար ավելի շատ աշխատել, ավելի շատ գրել:

Եվ վերջում ես շատ մեծ շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ իմ մտքերն արտահայտելու հնարավորություն տալու համար: Օգտագործելով այս առիթը՝ սիրով եւ հարգանքով ողջունում եմ իմ հայ ընթերցողներին:

*Ջրույցը վարեց  
Ռուբեն Մելքոնյանը*

## ՄԱՐՏԵԴԱԿԱՆ ՀՈՒՅՆԵՐԸ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

### Արման Հակոբյան

Տարբեր գնահատականներով՝ մահմեդական հույների թիվը Թուրքիայում հասնում է մինչև 700 հազարի: Որպես կանոն, մահմեդականությունն դավանող հույները բաժանվում են մի քանի խմբերի: Օսմանյան տիրապետության շրջանում քրիստոնյաների նկատմամբ Կրետե կղզում իրականացված բռնությունների, ճնշումների հետեւանքով հազարավոր հույներ ստիպված եղան ընդունել մահմեդականություն՝ հետագայում ձուլվելով կղզի տեղափոխված թուրք բնակչության հետ: Իսլամացած հույների այս խմբին բնորոշ է թուրքական ինքնագիտակցությունը: Վերջիններս բնակվում են Թուրքիայի հարավային եւ հարավարեւելյան՝ Այդընի, Անթալիայի, Դենիզլիի, Մերսինի, Իսքենդերունի շրջաններում, ինչպես նաեւ Չանաքքալեում, Մանիսայում եւ Թեքիրդաղում: Կրետե կղզու իսլամացած հույները Թուրքիայում հաստատվել են 1908թ.: Նրանց թիվը հասնում է 300 հազարի: Այս խմբի ինքնանվանումն է Girit Musلمانlari: Կրետե կղզուց տեղափոխված իսլամացած հույների մի զգալի մաս ապրում է Թուրքիայի կողմից զավթված, այսպես կոչված, «Հյուսիսային Կիպրոսում», ուր նրանք գրեթե ձուլվել են տեղացի թուրքերին\*:

---

\* Իսլամացած հույների մեկ այլ խումբ, որը եւս արտագաղթել է Կրետե կղզուց, բնակվում է Լիբանանում եւ Սիրիայում: Հույների այս խումբը ժամանակին դիմում է սուլթան Աբդուլ Համիդին իրենց Լեւանտի շրջանում բնակեցնելու խնդրանքով: Սուլթանն ընդունում է վերաբնակեցման ծրագիրը, եւ 1896թ. Սիրիայում հիմնադրվում է առաջին բնակավայրը, որն ի պատիվ սուլթանի կոչվում է Համիդիե: Այն այժմ ունի 3000-ից ավելի բնակչություն, որի 60%-ը կազմում են Կրետեի իսլամացած հույները: Վերջիններս բնակվում են նաեւ Լիբանանի հյուսիսում գտնվող Տրիպոլի քաղաքում, ուր նրանց թիվը, ըստ տարբեր տեղեկությունների, հասնում է 8000-ի: Հետաքրքրական է, որ Սիրիայում եւ Լիբանանում բնակվող հույն մահմեդականներն ընտանիքներ ձեւավորում են իրենց համայնքի շրջանակներում եւ, ի տարբերություն Կրետե կղզուց Թուրքիայի տարբեր շրջաններ տեղափոխված մյուս հայրենակիցների, պահպանել են հունարեն լեզուն ու սովորույթները:



Թուրքիայում մահմեդական հույները բնակվում են նաև Սեւ ծովի առափնյա շրջաններում՝ Սամսունից մինչև Ռիզե: Իսլամացած հույներով առավել հոծ բնակեցված է, այսպես կոչված, «Սեւ գետի» ավազանը, ուր համատարած կրոնափոխությունը պոնտոսցի հույների եւ համաշխարհային շրջանում սկսել է Ղուռուֆոլլի Մեհմեդը, որը ենիչերիների խմբերով մի քանի անգամ ներխուժել է Սեւ գետ, որտեղ 10 տարի մահմեդականություն է քարոզել: Ընդունված է համարել, որ պոնտոսցի հույները դավանափոխվել սկսել են 16-րդ դարի կեսերին, սակայն կրոնական ճնշումներն ուժեղացել են հատկապես 18-րդ դարում, ինչի հետևանքով բազմաթիվ հունական բնակավայրեր ամբողջությամբ մահմեդականացվել են:

Հունական ծագում ունեցող թուրք լրագրող, հրապարակախոս Օմեր Ասանի գնահատականներով՝ իսլամացած պոնտոսցի հույների թիվը Թուրքիայում այսօր հասնում է 300 հազարի, այլ գնահատականներով՝ շուրջ 500 հազարի: Ըստ մի շարք հեղինակների՝ Բալթաչի եւ Սուլաքլի գետերի ավազանում այժմ էլ աղավաղված հունարենով խոսող բազմաթիվ գյուղեր կան: Հասան Ումուրը, որը եւս զբաղվում է իսլամացած հույների խնդրով, նշում է, որ Տրապիզոն քաղաքի բնակչությունն այսօր էլ հիմնականում թրքախոս հույներից է բաղկացած: 1977թ. հրատարակված մի տեղեկագրում նշվում է, որ իսլամացած հույները կազմում են Տրապիզոն քաղաքի բնակչության 70%-ը: 1987թ. հրատարակված մեկ այլ տեղեկագրում նշվում է, որ մահմեդականություն դավանող հույները կենտրոնացած են Տրապիզոն, Սամսուն, Օրդու, Գիրեսուն, Ռիզե, Ֆաթսա, Ունիե քաղաքներում, ինչպես նաև՝ Տոնիայի, Սյուրմենեի, Չայքարիի, Ուզունգյուլի եւ Շերիխոյի շրջաններում: Մահմեդականացված պոնտոսցի հույները գերակշռում են նաև Մաճկայում, Թորոլում, Յաղըլդերեում, Սանտայում, Կրոմնիում եւ Օֆի շրջանում: Օֆի շրջանում ապրող պոնտոսցի հույները տարբերվում են իրենց ազգակիցներից առավել մուլեռանդ մահմեդականներ լինելով:

Ինչ վերաբերում է իսլամացած հույների մյուս խմբերին, ապա Թուրքիայի կենտրոնական շրջաններում եւս գոյություն ունեն համայնքներ, որոնք, սակայն, գրեթե ձուլվել են թուրքերին: Այդպիսի համայնքներ նախկինում կային Կեսարիայի, Մալաթիայի, Սեբաստիայի, Ամասիայի, Կոնիայի շրջաններում: Քահրամանի շրջանի գերակշիռ մասը կազմում են, այսպես կոչված, Քահրամանլիդ-հույները, որոնք բաժանվում են երկու խմբի: Առաջինը դավանում է քրիստոնեություն,

թեև ամբողջությամբ թրքախոս է եւ դեռեւս 1920-ականներին արտագաղթել է Թուրքիայից՝ հաստատվելով Հունաստանի տարբեր շրջաններում: Քահրամանլիդների մյուս խումբն իսլամացվեց օսմանյան տիրապետության շրջանում՝ գրեթե ամբողջությամբ ծուլվելով թուրքերին եւ յուրյութներին:

Բացի վերոնշյալ խմբերից, մահմեդական հույներ են ապրում նաեւ Թուրքիայի այլ շրջաններում, որոնք, սակայն, մեծաթիվ չեն եւ գրեթե ծուլված են: Մինչ այժմ Թուրքիայի որոշ քաղաքներում, օրինակ՝ Անկարայում, Բուրսայում, Աֆյոնում, գոյություն ունեն թաղամասեր, որոնց բնակիչները, ըստ տեղացիների, նախկինում քրիստոնյաներ էին՝ առավելապես հույներ եւ հայեր: Հույն լրագրողներն իսլամացած հույներով բնակեցված շրջաններ են նշում նաեւ Անտիոքում՝ Իսքենդերունի, Սամանդաղի եւ Ալթնգյուլի հատվածներում:

Շատ հետազոտողներ մահմեդականացված հույներին վերաբերող իրենց ուսումնասիրություններում նշում են այն մասին, որ դեռեւս Բյուզանդական կայսրության օրոք թուրք-հունական եւ հակառակը՝ հույն-թուրքական միաձուլման գործընթացները զարգացել են բավական ակտիվ, ինչի արդյունքում արդեն Բյուզանդիայի անկումից հետո նախկին կայսրության տարածքում բնակվում էին հունադավան թուրքական ցեղեր, ինչպես նաեւ մահմեդականություն ընդունած հույներ:

Իսկ սեւծովյան շրջանում հաստատված թուրքմենական Չեփնի ցեղը մեծ դեր խաղաց տեղի հույների ինքնագիտակցության փոփոխման հարցում: Այսօր էլ Տրապիզոնի հույների մի մասը տարբերվում է շրջանի իսլամացած հույների այլ խմբերից՝ Չեփնի թուրքմենների հետ ավելի սերտ հարաբերությունների մեջ գտնվելով: Շատ ուսումնասիրողներ նշում են իսլամացած հույների խիստ ծայրահեղական վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ, չնայած այն հանգամանքին, որ իրենք էլ դեռեւս 2-3 դար առաջ դավանել են քրիստոնեություն: Օրինակ՝ Մարաշլին Օֆի շրջանի այն կրոնական մուլեռանդ գյուղերից է, որտեղ իսլամի ուսուցումը սկսել է դասավանդվել տեղի մահմեդական հույների կողմից դեռեւս 1737թ.:

Թուրքիայում բնակվող իսլամացած հույների մեծամասնությունը խոսում է աղավաղված թուրքերենով: Կրետե կղզու հունարենով այժմ խոսում են միայն տարեցները, այն էլ ոչ բոլոր շրջաններում: Պոնտոսի հույների մի մասը խոսում է բացառապես թուրքերեն, իսկ մյուս մասը՝ հունարեն: Օրինակ՝ Չայքարիի եւ Օֆի գյուղերի բնակիչներն անգամ

աղոթատեղերում գործածում են հունարենը: Սակայն հույների այս խումբն իրեն խիստ առանձնացնում է մնացյալ հույներից՝ իր խումբը կոչելով «թուրքոս» եւ լեզուն՝ «ռոմաիկա», իսկ հույներին՝ առհասարակ «օրոմեոս»:

Թուրքիայում բնակվող իսլամացած հույներն ակտիվացման մշաններ ցույց տվեցին անցյալ դարի 90-ականների սկզբին, երբ շատ երիտասարդներ փնտրելով իրենց արմատները՝ փորձում էին հաստատվել Յունաստանում, սակայն այդ գործընթացը զանգվածային բնույթ չկրեց: Արդյունքում՝ ազգային ինքնագիտակցության վերածնունդը գրեթե մարեց: Միայն վերջին շրջանում հունական ծագում ունեցող որոշ թուրք գիտնականներ, պատմաբաններ, լրագրողներ սկսել են խոսել մահմեդականացված հույների մասին՝ խնդրի վերաբերյալ հետաքրքրություն առաջացնելով թուրքական հասարակության շրջանում:

## **ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Սարգիս Հարությունյան**

Նախորդ ամիսների ընթացքում Վրաստանի շուրջ ծավալված դեպքերը թույլ են տալիս ենթադրել, որ 2003թ. վարդերի հեղափոխությունից հետո առաջին անգամ Թբիլիսին ստիպված կլինի փոփոխություններ մտցնել իր արտաքին քաղաքականության մեջ, եւ այդ փոփոխությունների արդեն իսկ ակտիվ գործընթացի ավարտի մասին կարելի է խոսել միայն 2008թ. ապրիլին Բուխարեստում կայանալիք ՆԱՏՕ-ի հերթական գագաթաժողովից հետո:

### **Փոփոխություն ռուսական քաղաքականության մեջ**

Կարելու էրկու գործոններից մեկը, որը բնութագրում է նոր իրավիճակը, Վրաստանի նկատմամբ ռուսական քաղաքականության մեջ տեղ գտած փոփոխությունն է:

Թեեւ անցած մոտ երեք ամիսների ընթացքում Վրաստանի նկատմամբ Մոսկվայի մոտեցման մեջ չգրանցվեց որեւէ սկզբունքային տեղաշարժ, սակայն կոնկրետ փոփոխության ենթարկվեց Թբիլիսիի ուղղությամբ ռուսական ռազմաքաղաքական ճնշումն ապահովող ձեռնարկների բնույթը:

Ա.թ. հոկտեմբերի 17-ին հայտնի դարձավ, որ նույն օրը Վիեննայում, ԵԱՀԿ կենտրոնակայանում, այդ հաստատության փորձագետների հատուկ խումբը պաշտոնական եզրակացության է եկել, թե այս տարվա օգոստոսի 6-ին Վրաստանի Գորիի շրջանի Ցիտելուբանի գյուղի մերձակայքում տեղ գտած հրթիռային հարձակումն իրականացրել է ռուսական օդուժը:

Չնայած պաշտոնական Մոսկվան շարունակում է հերքել իր մասնակցությունը նշված միջադեպին, սակայն Ցիտելուբանի գյուղի մերձակայքում տեղի ունեցած հրթիռային հարձակման առնչությամբ դեռեւս օգոստոսի սկզբներին ուշադրություն գրավեցին հետեւյալ հանգամանքները.

❖ արձակված տակտիկական հակառադարային հեռակառավարվող հրթիռն ուղղակի մեսիջ էր Թբիլիսիին, որ Աբխազիայի եւ/կամ Հարավային Օսիայի հետ հավանական բախման պարագայում

վրացական կողմը տանուլ է տալու պատերազմի օդային մասը, հետեւաբար՝ հայտնվելու է խիստ աննպաստ իրավիճակում,

❖ չնայած ամերիկա-վրացական ու եվրոպա-վրացական խորացող ռազմաքաղաքական հարաբերություններին, Մոսկվան քաղաքական որոշում կայացրեց ու իրականացրեց նման տիպի քայլ,

❖ հատկանշական էր ընտրված կետը. Ցիտելուբանին Թբիլիսիից հեռու է ընդամենը 65կմ,

❖ տեղի ունեցածը տեղեկատվական-հոգեբանական ճնշում էր Վրաստանի նկատմամբ, եւ այդ տիպի ու հնչեղության ակցիան նաեւ ենթադրում է բնույթով նման այլ ձեռնարկների իրականացում:

Պետք է ներկայացված տրամաբանության ներքո դիտարկել նաեւ օգոստոսի 6-ի միջադեպից որոշ ժամանակ անց՝ օգոստոսի 21-ին եւ նոյեմբերի 4-ին տեղ գտած նմանատիպ իրադարձությունները, երբ ռուսական օդուժը խախտեց վրացական օդային սահմանը:

Վրաստանի ուղղությամբ ռուսական քաղաքականության մեջ տեղ գտած փոփոխության հաջորդ կարեւոր ցուցիչը նույն Թբիլիսիի նկատմամբ Աբխազիայի ու Չարավային Օսիայի գծերով ի հայտ եկած տարրերն են:

Օգոստոսի 31-ին տարածված տեղեկության համաձայն, Չարավային Օսիայի նախագահ Էդուարդ Կոկոյտին մտադիր էր դիմել Մոսկվային՝ հանրապետության տարածքում հակաօդային պաշտպանության համակարգի տեղակայման նպատակով:

Չաշվի առնելով Ցխինվալիի աշխարհագրական դիրքը՝ Չարավային Օսիայում նման համակարգի տեղակայումը կարող է լրջորեն սահմանափակել վրացական օդուժի օպերատիվ-տակտիկական հնարավորությունները՝ այդ թվում արխազական ուղղությամբ:

Չնարավոր է, որ հայտարարությունն ուներ ընդամենը տեղեկատվական նշանակություն, սակայն եթե այն համապատասխանում է իրականությանը, ապա նպատակ կա փոխելու նախկինում մի զգալի մասով զուտ տակտիկական նշանակության մարտերի համար նախատեսված հարավօսական զինված ուժերի բնույթը: Այսինքն՝ Աբխազիայի եւ/կամ Չարավային Օսիայի հետ հավանական բախման դեպքում վրացական բանակը ստիպված է լինելու գործ ունենալ ռազմավարական կարգի միանգամից երկու ուղղության հետ:

Երկրորդ կարեւոր դրվագը սեպտեմբերի 26-ին կտրուկ սրված իրավիճակն էր հարավօսական ու արխազական հակամարտության գոտիներում: Այդ օրը երեկոյան Ցխինվալիի ու նրան հարակից վրացական Նիկոզի ու Էրգնետի գյուղերի միջեւ տեղի ունեցած լուրջ

փոխհրաձգության արդյունքում (այդ թվում՝ ծանր զինատեսակների օգտագործմամբ) ճակատային գիծ ուղղվեցին հարավօսական ու արխագական բանակային կազմավորումներն ու ծանր զինտեխնիկան:

Այստեղ հարկավոր է առանձնացնել ոչ այնքան այն կետը, որ ճգնաժամային իրավիճակում արխագական ու հարավօսական զինված ուժերը գործեցին միասնաբար (նման պայմանավորվածություն ձեռք էր բերվել վաղուց), այլ այն հանգամանքը, որ, իրականում, ռուսական կողմը փորձարկեց Վրաստանին կործանարար պատերազմի մեջ ներքաշելու սցենար:

Անշուշտ, արխագական ու հարավօսական զօերում ի հայտ եկած լարվածության աճն օգոստոսի 6-ին, 21-ին ու նոյեմբերի 4-ին տեղի ունեցած միջադեպերի տրամաբանական մասն է, սակայն հիմնական հետեւությունն այն է, որ ներկայացվածն արտացոլում է Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի ռազմաքաղաքական ընդլայնվող ճնշման համալիր բնույթը:

### **Օկրուաշվիլու քայլը**

Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օկրուաշվիլու հետ կապված զարգացումներն ուշագրավ էին ոչ այնքան այն առումով, որ Սահակաշվիլու նախկին զինակիցը բավական լուրջ մեղադրանքներ ներկայացրեց վերջինիս նկատմամբ, այլև այն պատճառով, որ 2003թ. վարդերի հեղափոխությունից հետո առաջին անգամ համալիր բնույթի փորձ արվեց եթե ոչ հասնել Սահակաշվիլու պաշտոնանկությանը, ապա գոնե լրջորեն թուլացնել նրա իշխանությունը:

Այդ առումով հարկ էր ուշադրություն դարձնել հետեւյալ կետերի վրա.

❖ ծանր բնույթի մեղադրանքներ ներկայացնելով Սահակաշվիլուն՝ Օկրուաշվիլին հասկանում էր, որ իշխանության համար ամենաանընդունելի տարբերակով դնում է իշխանափոխության հարց, հետեւաբար՝ Վրաստանի պաշտպանության նախկին նախարարը չէր կարող չհասկանալ, որ նման կարգի ակցիայի մեկնարկը պահանջում է արտաքին աջակցություն՝ գոնե սեփական անձի անվտանգությունը երաշխավորելու առումով,

❖ արտաքին գործոնի ներգրավվածության մասին է խոսում նաեւ Պատարկացիշվիլու մասնակցությունը նշված ակցիային. դժվար թե քաղաքական պայքարում փորձ ունեցող օլիգարխն առանց հիմնարար ուժի գնար նման քայլի, իսկ այսօրվա Վրաստանում այդպիսի ուժ կարող էր ի հայտ գալ միայն երկրից դուրս,

❖ հատկապես նման մեղադրանքներից հետո վրացական իշխանությունների որոշումը՝ ձերբակալել Օկրուաշվիլուն, քաղաքական պայքարի տեսանկյունից, անշուշտ, կոպիտ սխալ էր, ինչը չէին կարող չհասկանալ Սահակաշվիլու վարչակազմում. հետեւաբար՝ նման որոշումը կարող էր վկայել միայն մի բան՝ վտանգն իրոք լուրջ է եղել,

❖ այդ ենթադրության օգտին են խոսում առնվազն հետեւյալ փաստերը. Վրաստանի պաշտպանության նախկին նախարարի ձերբակալման օրը՝ սեպտեմբերի 27-ին, Թբիլիսիի մոտակայքում տեղակայված վրացական բանակի 4-րդ բրիգադի գորամասում այդ երկրի հատուկ ծառայությունների իրականացրած գործողության արդյունքում ձերբակալվեցին մոտ 20 զինծառայողներ, այդ ընթացքում ԱՄՆ-ում գտնվող նախագահ Սահակաշվիլին ստիպված եղավ կարճել իր օտարերկրյա շրջագայությունը (նա չմեկնեց Յունաստան) եւ սեպտեմբերի 29-ին շտապ վերադարձավ Թբիլիսի՝ ըստ որոշ տեղեկությունների, վերադասավորումներ իրականացնելով վրացական ներքին գործերի ու ազգային անվտանգության համակարգերում, եւ վերջապես՝ Օկրուաշվիլու ձերբակալությունից հետո Վրաստանի անվտանգության մարմինները հետապնդումներ սկսեցին վերջինիս օրոք պաշտպանության նախարարությունում բարձր պաշտոններ զբաղեցրած անձանց դեմ:

### **Տեղաշարժ արեւմտյան քաղաքականության մեջ**

Եթե այս օգոստոսից ի վեր սրված ռուս-վրացական հակամարտության առնչությամբ սկսեց նկատվել Թբիլիսիի նկատմամբ ամերիկյան ու եվրոպական քաղաքականությունների որոշակի փոփոխություն, ապա արդեն նոյեմբերի 7-ից Վրաստանում կտրուկ սրված ներքաղաքական իրավիճակը, թերեւս, լիարժեք կերպով ի ցույց դրեց Սահակաշվիլու վարչակազմի նկատմամբ արեւմտյան ողջ քաղաքականության մեջ տեղ գտած տեղաշարժը:

Օրինակ, թեւեւ հոկտեմբերի 3-4-ը Թբիլիսիում գտնվող ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յապա դե Յոոպ Սխեւերը հայտարարեց, թե ՆԱՏՕ-Վրաստան հարաբերություններում մի երրորդ երկիր չի կարող ունենալ որոշիչ ձայն՝ ակնարկելով Ռուսաստանին, սակայն Սխեւերի այցը նշանավորվեց երկու շատ էական կետով.

❖ չնայած վրացական կողմի սպասումներին, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը որեւէ կոնկրետ խոստում չտվեց 2008թ. ապրիլին Բուխարեստում Թբիլիսիին՝ ՆԱՏՕ-ի անդամակցության ճանապարհին վերջին փուլի՝ MAP-ի («Membership Action Plan») շնորհման վերաբերյալ,

❖ ավելին՝ Սխեմերն ուղղակի հայտարարեց, թե ՆԱՏՕ-ի անդամակցության ճանապարհին Վրաստանը դեռ շատ գործ ունի անելու՝ հատկապես առանձնացնելով փոքր ու արդյունավետ բանակ ստեղծելու պահանջը, ինչն ուղղակի հակասության մեջ է մտնում Սահակաշվիլու վարչակազմի վարած ռազմական շինարարության քաղաքականության հետ<sup>1</sup>:

Այդ իմաստով Ֆրանսիայի պաշտպանության նախարար Էրվե Մորիսի հոկտեմբերի 3-ի հայտարարությունը, թե Փարիզը դեմ է Հյուսիսատլանտյան դաշինքին Թբիլիսիի անդամակցությանը, եթե դա կբերի Ռուսաստանի հետ առճակատման, թերեւս, արդեն արտացոլում էր քաղաքական որոշակի գիծ եւ մեկանգամյա ակցիա չէր:

Ամենաուշագրավ փաստը, սակայն, առնչվում է նոյեմբերի 7-ից լրջորեն սրված վրացական ներքաղաքական իրավիճակի առնչությամբ Սահակաշվիլու վարչակազմի նկատմամբ արեւմտյան քաղաքականությունների որդեգրած աննախադեպ կոշտ գծին:

Անշուշտ, նոյեմբերի 7-ից ի վեր Սահակաշվիլու վարչակազմի ձեռնարկած նման ծայրահեղ քայլերը կարող են վկայել, թե իշխանափոխության վտանգը բավական լուրջ է ընկալվել, սակայն ուշադրություն գրավեց այն հանգամանքը, որ Արեւմուտքը որոշում կայացրեց աննախադեպ կոշտ դիրքորոշում բռնել Սահակաշվիլու նկատմամբ: Դժվար թե Վաշինգտոնում ու Բրյուսելում որոշեին դեմ դուրս գալ վրացական իշխանությունների նման կոշտ քայլերին, եթե Վրաստանի ներքաղաքական լարվածության պատճառն, իրոք, լիներ Մոսկվան:

Թեեւ մյուս կողմից այս վարկածը չի կարող ամբողջովին հերքել վրացական քաղաքական սրացումներում ռուսական հետքը, սակայն գլխավորն այն է, որ Արեւմուտքում որոշեցին օգուտներ քաղել Սահակաշվիլու վարչակազմի դժվարություններից՝ բացահայտ ճնշում բանեցնելով վրացական իշխանությունների նկատմամբ<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Նշենք, որ Վրաստանի ղեկավարության որոշմամբ առաջիկա ամիսներին բանակի թվակազմը 28 հազարից հասցվելու է 32 հազարի, իսկ գալիք տարվա ռազմական բյուջեն կկազմի \$783 մլն՝ 2006թ. մոտ \$200 մլն-ի դիմաց:

<sup>2</sup> Ամերիկյան ու Եվրոպական բարձրաստիճան դիվանագետների, Եվրոպայի խորհրդի ու ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարների՝ Սահակաշվիլու վարչակազմի քայլերը քննադատող հայտարարություններից զատ, բանը հասավ այնտեղ, որ Եվրամիությունը որոշեց հետ կանչել իր դեսպանին Թբիլիսիից:



### **Յետեւություններ**

Մի կողմից, ներկայացվածը հիմք է տալիս ենթադրելու, որ առաջիկա ամիսներին՝ մինչեւ 2008թ. ապրիլին Բուխարեստում կայանալիք ՆԱՏՕ գագաթաժողովը, Ռուսաստանը շարունակելու է կոշտ ռազմաքաղաքական գիծ վարել Թբիլիսիի նկատմամբ: Մյուս կողմից, արեւմտյան տեղեկատվական դաշտում Սահակաշվիլու իմիջի նման «փչացումը» դժվար թե վկայի ինչ-որ իրավիճակային ակցիայի մասին:

Մոտակա գլխավոր հարցն, անշուշտ, 2008թ. հունվարի 5-ին Վրաստանում նշանակված արտահերթ նախագահական ընտրություններն են: Ամենայն հավանականությամբ, այդ ընտրություններին հաղթանակ կտանի Միխայիլ Սահակաշվիլին, հատկապես որ մեծահարուստ Բադրի Պատարկացիշվիլու որոշումը՝ մասնակցել առաջիկա նախագահական ընտրություններին, ընդդիմությանն այլեւս զրկում է միասնական թեկնածու առաջ քաշելու հնարավորությունից:

Մյուս կողմից, Պատարկացիշվիլին շատ լավ հասկանում է, որ չլինելով ազգությամբ վրացի՝ ընտրություններում ինքը չի կարող հաղթել Սահակաշվիլուն: Յետեւաբար, խնդիր է դրվում ապահովել Վրաստանի գործող նախագահի վերընտրությունը:

Ամբողջ հարցն այն է, որ առաջիկայում Մոսկվան չի կարող Վրաստանում իրականացնել իշխանափոխության սցենար: Նման սցենար ունակ է իրականացնել առաջին հերթին Վաշինգտոնը, որն էլ ունի ապագայի համար այդպիսի սցենարը կյանքի կոչելու լծակներ, օրինակ՝ վտարանդի դարձած «հալածյալ» Օկրուաշվիլու կամ վրացական խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեի առաջքաշումը որպես նախագահի հաջորդ թեկնածու: Վերջինս, ի դեպ, անցած հոկտեմբերին ոչ միայն առանձին հրավիրվեց Վաշինգտոն, այլեւ ընդդիմության ու Սահակաշվիլու վարչակազմի միջեւ ընթացող բանակցությունների գլխավոր միջնորդն էր:

Մնում է ենթադրել, որ Վաշինգտոնի նպատակը եղել է ամրապնդել ամերիկյան ազդեցությունը վերահսկողությունից դուրս եկող Սահակաշվիլու նկատմամբ:

## **ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ Սեւակ Սարուխանյան**

*Վերջին երկու ամիսների ընթացքում Իրանի ներքին եւ արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցան կարեւոր զարգացումներ, որոնց մեծ մասը կապված է երկրի միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցությունների հետ: Միջուկային հիմնահարցի ազդեցությունը բավական լուրջ է Իրանի ներքաղաքական կյանքում, որտեղ, 2008-ի խորհրդարանական եւ 2009-ի նախագահական ընտրություններին ընդառաջ, շարունակում են նկատվել որոշակի վերադասավորումներ:*

### **ՌԴ նախագահի այցը Թեհրան**

Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինի հոկտեմբերյան այցը Թեհրան նշանավորվեց Իրան–Ռուսաստան հարաբերություններում եւ Իրանի միջուկային ծրագրի հետ կապված գործընթացներում նոր զարգացումներով:

Ուշադրության է արժանի Վ.Պուտինի հարցազրույցն Իրանի պետական հեռուստատեսությանը եւ ԻՌՆԱ գործակալությանը, որի ժամանակ ՌԴ նախագահը մատնանշեց այն հիմնական ուղղությունները, որոնց մասով ակնկալում է ՌԴ–Իրան հարաբերությունների հետագա զարգացում. էներգետիկա, ինքնաթիռաշինություն, առևտուր եւ այլն: Սակայն միայն սրանով չէ, որ հետաքրքիր է Վ.Պուտինի հարցազրույցը, այլ նաեւ այն միանշանակ դիրքորոշմամբ, որը նա արտահայտեց Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Իրանցի լրագրողի հարցին, թե արդյոք նա կարող է խոստանալ, որ մինչեւ տարեվերջ կավարտվի Բուշերի կառուցումը եւ կսկսվի միջուկային վառելիքի մատակարարումը, Վ.Պուտինը պատասխանեց. «Ես խոստումներ եմ տվել միայն իմ մայրիկին, երբ փոքրիկ եմ եղել»: Նման պատասխանով ՌԴ նախագահը, փաստորեն, անթաքույց հասկացնել տվեց, որ Իրանի հետ միջուկային համագործակցությունը մեծապես կախված է նրա՝ միջազգային հանրության հետ միջուկային հարցերի շուրջ բանակցությունների հաջողությունից:

Անկասկած, ամենաուշագրավը Վ.Պուտին–Ա.Խամենեյի հանդիպումն էր: Վ.Պուտինը վերջին մի քանի տարիների կտրվածքով

միջազգային ազդեցիկ հանրությունը ներկայացնող առաջին ղեկավարն էր, որը հանդիպեց Իրանի հոգեւոր առաջնորդի հետ եւ հնարավորություն ունեցավ անմիջականորեն վերջինիս փոխանցել իր եւ Արեւմուտքի՝ արդեն իսկ մեծ մասամբ ընդհանրական մոտեցումներն Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Քննարկվող հարցերից ամենակարեւորն, իհարկե, պետք է համարել հենց միջուկային ծրագիրը, մանավանդ որ Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի (ԻԱԱԲԽ) քարտուղար Ալի Լարիջանին արդեն հասցրել էր հայտարարել, թե Ռուսաստանի նախագահը նոր առաջարկներ է բերել Իրան: Նշենք, որ նույն Լարիջանին հրավիրված չէր մասնակցելու Վ.Պուտին–Ա.Խամենեի հանդիպմանը, ինչը Լարիջանիի մոտակա պաշտոնազրկման հնարավորությունը ցուցող առաջին նշաններից էր: Իրանի ԱԳՆ-ն, ի դեպ, հերքել է Լարիջանիի այն հայտարարությունը, թե Պուտինն Իրանին նոր առաջարկություններ է արել: Այն, որ Լարիջանիի հայտարարությունը միակն էր «պուտինյան առաջարկի» մասին, բավարար հիմք չի կարող համարվել պնդելու, որ ոչ մի առաջարկություն Ռուսաստանի նախագահի կողմից Իրանին չի արվել, մանավանդ որ սեպտեմբեր–հոկտեմբերը եղել են ռուս-ամերիկյան ռազմավարական երկխոսության ակտիվացման ամիսներ, իսկ այս երկխոսության էական մաս է կազմում նաեւ Իրանի միջուկային հիմնախնդիրը: Կարելի է ենթադրել, որ Իրանի ղեկավարությունը որոշում է կայացրել կասեցնել միջուկային հիմնախնդրի շուրջ ընթացող բանակցությունների հանրային տարածումը, ինչն ակնհայտ է իրանական մամուլի էջերում, որտեղ քննարկումները միջուկային ծրագրի շուրջ վերջին շրջանում վերածվել են ներքաղաքական բանավեճերի անբաժան մասի, ինչը պայմանավորված է զարմանը սպասվող խորհրդարանական ընտրություններով:

Ակնհայտ է, որ Իրանի հոգեւոր առաջնորդ Խամենեիի եւ նախագահ Ահմադինեժադի միջեւ փոխհամաձայնեցված մոտեցում է ձեւավորվել միջուկային ծրագրի հարցի վերաբերյալ, որը ենթադրում է հնարավոր զիջումների առավելագույն բացառում եւ բանակցային գործընթացի նվազագույն քննարկում հանրության շրջանում:

### **Ա.Լարիջանիի պաշտոնանկությունը**

Թերեւս, Ահմադինեժադ–Խամենեի փոխհամաձայնության արդյունք է նաեւ Ա.Լարիջանիի հեռացումը ԻԱԱԲԽ քարտուղարի պաշտոնից:

Անշուշտ, Լարիջանին շարքային քաղաքական գործիչ չէ: Բացի նրանից, որ ԻԱԱԲԽ քարտուղարն էր, նա անմիջական բարեկամական

կապեր ունի Իրանի հոգեւոր վերնախավի մի ազդեցիկ մասի հետ: Մի կողմից՝ Ա.Լարիջանին հայտնի աստվածաբան այաթուլա Ամոլիի ազգականն է, որը նաեւ բավական հետաքրքիր քաղաքական փորձ ունի (իր բազմաթիվ աշխատություններում հանդես գալով ԽՍՀՄ գաղափարախոսության նկատմամբ անթաքույց ատելությամբ՝ նա 1989-ին վճռորոշ դեր է խաղացել խորհրդա-իրանական մերձեցման գործում), մյուս կողմից՝ այաթուլա Մ.Մոթահարիի փեսան է (Մոթահարին եղել է Ա.Խոմեյնիի մերձավորը եւ իսլամական հեղափոխության գաղափարախոսներից մեկը): Լինելով միջուկային ծրագրի վերաբերյալ կարծր քաղաքական գծի կողմնակից՝ Ա.Լարիջանին, որպես ԻԱԱԲԽ քարտուղար եւ միջուկային ծրագրի հարցի շուրջ բանակցող, աչքի է ընկել կոշտ, բայց կառուցողական մոտեցումներով՝ իր գործունեության ընթացքում ոչ մի սկանդալային հայտարարություն չհանելով:

Վերջին մեկ տարվա ընթացքում բավական հաճախակի էին դարձել Խամենեյի-Լարիջանի հանդիպումները (Լարիջանին ԻԱԱԲԽ քարտուղարի պաշտոնից ազատվելուց հետո էլ մնաց Խամենեյի անձնական ներկայացուցիչն այդ կառույցում), ինչը վկայությունն է այն իրողության, որ Լարիջանին նախագահական նստավայրից տեղափոխվել էր հոգեւոր առաջնորդի նստավայր: Սա, իհարկե, չէր կարող չգրգռել Մ.Ահմադինե-ժադին, որի դիրքերը ներքաղաքական դաշտում բավական թուլացել են: Ակնհայտ է, որ միջուկային հիմնախնդրի կարգավորումը եւ Արեւմուտքի հետ հարաբերությունների մասնակի լավացումը կարող են էլ ավելի թուլացնել Իրանի նախագահի դիրքերը: Այս տեսանկյունից Ա.Լարիջանի նկատելի հաջողությունները ԵՄ արտաքին հարցերով հանձնակատար Խ.Սոլանայի հետ բանակցություններում լուրջ սպառնալիք էին Ահմադինե-ժադի եւ ծայրահեղականների համար, ինչը չէր կարող չհանգեցնել Ա.Լարիջանի պաշտոնանկությանն ուղղված քայլերի:

Մեր համոզմամբ, Ա.Լարիջանի պաշտոնանկությունը եւ նրա փոխարեն ԻԱԱԲԽ քարտուղարի պաշտոնում, ըստ որոշ աղբյուրների, բավական սահմանափակ ունակությունների տեր, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի վետերան Սայիդ Ջալիլի նշանակումը Իրանի ներքին եւ արտաքին քաղաքականության ոլորտներում նոր վերադասավորումների արդյունք են եւ ոչ միայն Մ.Ահմադինե-ժադի կամքի դրսևորում:

Փորձենք նշել, թե ինչ պատճառներ ունի եւ ինչ հետեւանքներ կունենա Ա.Լարիջանի պաշտոնանկությունը.

1. Արեւմուտքի հետ բանակցություններում որոշակի հաջողությունների հասնելով՝ Ա.Լարիջանին կարծես թե կրկնեց իր նախորդի՝

Յ.Ռուհանիի փորձը. վերջինս 2005-ի սկզբին նույնպես մոտ էր միջուկային հարցի կարգավորմանը, սակայն Մ.Խաթամիի պաշտոնավարման ավարտը խաչ քաշեց հնարավոր իրանա-եվրոպական համաձայնագրի ստորագրման վրա: Ա.Լարիջանին Արեւմուտքի հետ բանակցություններում նույնպես մոտ էր վերջնական դրական կարգավորմանը, ինչը ձեռնտու չէ ոչ միայն Մ.Ահմադինեժադին, այլև իրանական շատ քաղաքական ուժերի, քանի որ խորհրդարանական եւ նախագահական ընտրություններից առաջ Իրան-Արեւմուտք համաձայնություններն ու առավել եւս՝ համաձայնագրերի ստորագրումը կարող են աննախադեպ մեծ ազդեցություն ունենալ Իրանի ներքաղաքական կյանքի վրա:

2. Ա.Լարիջանիի հեռացմամբ իրանական ղեկավարությունը, առնվազն տեղեկատվական դաշտում, դիմեց միջուկային հարցերում իր դիրքորոշման կարծրացման, ինչն, անկասկած, կդանդադեցնի բանակցային գործընթացը, որն անհրաժեշտ է գրեթե բոլոր իրանական ուժերին, որոնք ակտիվորեն պատրաստվում են գալիք խորհրդարանական ընտրություններին:

3. Մ.Ահմադինեժադի մերձավոր Սայիդ Ջալիլիի նշանակումը ԻԱԱԲԽ քարտուղարի պաշտոնում ամենեւին չի նշանակում, թե միջուկային հարցերի շուրջ բանակցություններում որոշումներ ընդունող է դառնալու Իրանի նախագահը: ԻԱԱԲԽ քարտուղարի իրավական գործառնությունների մեջ չի մտնում միջուկային հարցերի շուրջ բանակցությունների ապահովումը: Սա կարող է բերել նրան, որ Իրանում կարող է ձեւավորվել նոր կենտրոն, որն իրական պատասխանատվություն կստանձնի միջուկային հարցերի շուրջ բանակցությունների համար: Նշենք, որ Ս.Լավրովի՝ նոյեմբերին Թեհրան կատարած այցելության ժամանակ հիմնական բանակցությունները միջուկային խնդրի շուրջ ՌԴ ԱԳ նախարարը վարել է Իրանի ԱԳ նախարարությունում:

Ալի Լարիջանիի պաշտոնանկությունից 5 օր անց ԱՄՆ-ը հայտարարեց Իրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառման մասին: Ամենանշանակալին կարել է համարել այն, որ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսն ընդգրկվեց ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից հաստատված ահաբեկչական կազմակերպությունների ցանկում: ԻԱԱԲԽ նոր քարտուղար Ս.Ջալիլին ԱՄՆ-ի կողմից անուղղակիորեն ճանաչվեց ահաբեկիչ:

Պետք է ասել, որ ամերիկյան պատժամիջոցներն իրենց նշանակությամբ այնքան էլ շոշափելի չեն Իրանի համար: Առավել մտահոգիչը Թեհրանի համար կարող են լինել քննարկումներն այն մասին, թե Ռուսաստանն ու ԱՄՆ-ը սկսել են «իրանական մեծ առեւտուր»: Որոշ

վերլուծաբաններ նույնքերի սկզբին կարծիք հայտնեցին, թե ԱՄՆ-ը առաջարկել է Չեխիայում եւ Լեհաստանում ռադարային կայաններ չտեղակայել, եթե Ռուսաստանը մասնակցի Իրանի մեկուսացմանը: Սակայն ՌԴ ԱԳՆ-ն, այդ թվում՝ պետական լրատվամիջոցների միջոցով, չափազանց արագ եւ հետեւողական կերպով հերքեց այս տեղեկությունը, ինչը կարող է հուշել այն մասին, որ «իրանական մեծ առեւտուրը» ամերիկյան տեղեկատվական ական է, որն առաջացավ Վ.Պուտինի թեհրանյան այցելությունից անմիջապես հետո եւ ուղղված էր իրանա-ռուսական հակասությունների սրմանը:

Ինչեւէ, Իրանը լուրջ զարգացումների փուլում է, եւ դրանց նշանակալի մասը կապված է ներքաղաքական կյանքի հետ: Առնվազն մինչեւ խորհրդարանական ընտրություններ չի կարելի սպասել որեւէ խոշոր փոփոխություն Իրան–Արեւմուտք հարաբերություններում: Սակայն բացառված չէ, որ նախընտրական ԱՄՆ-ում «իրանական խնդիրն» էլ ավելի հրատապ դառնա, ինչը կարող է բերել Իրան–ԱՄՆ հարաբերություններում նոր սրացումների: Ստիպված ենք նշել, որ ռազմական ընդհարման հնարավորությունը գալիք տարվա ընթացքում ամենեւին էլ սպառված չէ:

**ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ  
Դավիթ Հովհաննիսյան**

Թերեւս, առաջին անգամ Խորհրդային Միության փլուզումից հետո Միացյալ Նահանգների քաղաքական շրջանակներում տեղի է ունենում ռուս-ամերիկյան հարաբերությունների նորովի իմաստավորման փորձ: Ամերիկյան արտաքին քաղաքականության վերջին տարիների բացահայտ անհաջողությունները, ինչպէս նաեւ այն փաստը, որ մի շարք հարցերում ԱՄՆ-ը ներկայումս զգում է Ռուսաստանի աջակցության կարիքը, ակտուալացրել են այդ հարաբերությունների վերիմաստավորումը, ինչը երկար ժամանակ ամերիկյան քաղաքական էլիտային անհանգստացնող հարցերի շրջանակից դուրս էր:

Վերջերս ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը ռուս-ամերիկյան հարաբերությունները բնութագրեց որպէս բարդ եւ հակասական: Նրա կարծիքով, այս հարաբերություններում երեք հիմնական հարթություններ կան՝ համագործակցություն գլոբալ նշանակություն ունեցող հարցերում, առնչություններ հետխորհրդային տարածքում եւ Ռուսաստանի ներքին քաղաքականության վաշինգտոնյան ընկալումը: Եվ եթէ առաջին հարցի վերաբերյալ պետքարտուղարի տպավորությունները դրական են («Մենք Ռուսաստանի հետ հաստատել ենք բավական դրական համագործակցություն գլոբալ ահաբեկչության եւ գլոբալ միջուկային սպառնալիքների հետ պայքարի ոլորտում: Նույնը կարելի է ասել մեր համատեղ աշխատանքի մասին Հյուսիսային Կորեայի ուղղությամբ եւ, անկեղծ ասած, նաեւ Իրանի...»), ապա մյուս երկու հարթություններում կողմերը հեռու են փոխըմբռնումից:

Վերջերս ամերիկյան հեղինակավոր «Foreign Affairs» ամսագրում հրապարակած իր հոդվածում ամերիկյան վերլուծաբան Դ.Սայմսը փորձում է պարզաբանել այս երկու երկրների հարաբերությունների վատթարացման հիմնական պատճառը: Նրա տեսակետից, Միացյալ Նահանգները շարունակում է Ռուսաստանին վերաբերվել որպէս պատերազմում պարտված երկրի: Փաստորեն, Դ.Սայմսը բարձրաձայնում է այն դիրքորոշումը, որը վերջին տարիներին, թեւ ոչ նման հստակությամբ եւ շեշտակի ձեւակերպմամբ, սակայն հետեւողականորեն հնչեցրել են ռուսաստանյան տարբեր տիպի «դերժավնիկները», եւ որի իմաստն այն

հիմնական պնդումն է, թե Ռուսաստանի Դաշնությունն ունի «մեծ տերության» կարգավիճակ եւ պետք է իր քաղաքականությամբ (խոսքն, իհարկե, հիմնականում վերաբերում է արտաքին քաղաքականությանը) հաստատի այն:

Անշուշտ, սառը պատերազմն ավարտվեց Ռուսաստանի պարտությամբ, ինչի հետեւանքներն ունեցան նաեւ այնպիսի արտահայտություններ, ինչպիսին է հաղթող կողմի ռազմական ներկայությունը պարտվողին նախկինում պատկանող տարածքներում: Դ.Սայմսը գրում է, որ ամերիկյան զինվորները Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղակայվեցին Գերմանիայում եւ ճապոնիայում՝ օկուպացնելով այդ երկրները, ինչը տեղի չունեցավ սառը պատերազմի ավարտից հետո: Սակայն նա մոռանում է նշել, որ այն ժամանակ ո՛չ Գերմանիան եւ ո՛չ էլ ճապոնիան չունեին միջուկային զենքի հսկայական զինանոց, որի առկայությունն անհնար կդարձներ որեւէ այլ տիպի գլոբալ պատերազմ, բացի դրա «սառը» տարբերակից: Սառը պատերազմի ավարտից հետո Միացյալ Նահանգների եւ նրա դաշնակիցների ռազմական խարխիսներն ու ստորաբաժանումները տեղակայվեցին Խորհրդային Միության եւ նրա դաշնակից երկրների տարածքներում: Դժվար է ենթադրել, որ այս ամենը հայտնի չէ ամերիկյան փորձագետին, ուստի միակ եզրակացությունը, որն իրական իմաստ է ստանում, այն է, որ նա իր բավական մեծ արձագանք ստացած աշխատության մեջ փորձում է նոր գաղափարական մոտեցում առաջարկել ռուս-ամերիկյան հարաբերությունների համար:

Այս նոր մոտեցման ձեւավորման դրդապատճառները հասկանալի են. դրանք մակերեսի վրա են: Միացյալ Նահանգները չափազանց մտահոգ է մի շարք խնդիրներով՝ Իրաքում եւ Աֆղանստանում իրավիճակի զարգացման միտումներով, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում հակամերիկյան ուժերի իշխանության գալու պրոբլեմով, Միջին Արեւելքի մի շարք հիմնահարցերում՝ ամերիկյան շահերի տեսակետից քաղաքական գործընթացների ոչ նպաստավոր զարգացումներով, Յյուսիսային Կորեայի եւ Իրանի միջուկային ծրագրերով եւ այլն: Այս պայմաններում Միացյալ Նահանգները, բնականաբար, պետք է ձգտի Ռուսաստանի հետ հակասությունները հնարավորինս հարթել եւ համագործակցության հիմքերն ավելի նպաստավոր դարձնել:

Ռուսաստանի հետ հարաբերություններում, հավանաբար, հասունացել է այն պահը, որ ամերիկյան քաղաքական էլիտան իր կողմից հաստատի վերջինիս կարգավիճակը՝ որպես «մեծ տերություն»: Այստեղից, սակայն, չի բխում երբեմն արժարժվող հնարավորության մասին կարծիքը, թե Միացյալ Նահանգները կարող է կամ պետք է ձգտի Ռուսաստանը



դարձնել իր դաշնակիցը: Այս վերջինը, թերևս, կարող է հնարավոր դառնալ միայն այն դեպքում, եթե Չինաստանը հրաժարվի իր կայուն սկզբունքներից եւ ձեռնանուխ լինի իր բնական աշխարհաքաղաքական արեալից դուրս ագրեսիվ արտաքին քաղաքականության իրականացմանը, ինչը փորձագետների կողմից դեռևս գնահատվում է որպես քիչ հավանական, սակայն նաև՝ դժվար հաշվարկելի:

Իսկ ռուս-ամերիկյան ներկա հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրներն ակնհայտ են. Միացյալ Նահանգների նպատակը՝ ՆԱՏՕ-ի կազմի մեջ ընդգրկելու Ուկրաինան եւ Վրաստանը, ինչն անխուսափելի է դարձնում ամերիկյան ռազմական ներկայությունը Սեւ ծովում, սպառազինությունների սահմանափակմանն ուղղված մի շարք պայմանագրերի գործողության դադարեցումը, Ռուսաստանը շրջանցելուն ուղղված գլոբալ ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումը, Լեհաստանում եւ Չեխիայում ամերիկյան հակահրթիռային համակարգերի տեղադրման ծրագրերը եւ բազմաթիվ այլ հարցեր, որոնց նկատմամբ նավթագազային եկամուտների շնորհիվ իր տնտեսական ինքնուրույնությունը վերականգնած Մոսկվան ունի խիստ բացասական վերաբերմունք եւ ընկալում է բոլոր նման գործողությունները որպես կոնկրետ իր դեմ ուղղված թշնամական վերաբերմունքի դրսեւորումներ:

Ամենայն հավանականությամբ, ամերիկյան նախագահական ընտրություններին նախորդող ամբողջ ժամանակաշրջանում ռուս-ամերիկյան հարաբերությունները կմտնեն թեկնածուների կողմից քննարկվող հարցերի ցանկի մեջ: Չնայած թե՛ հանրապետական եւ թե՛ դեմոկրատական թեկնածուներն արդեն բավական ժամանակ է, ինչ սկսել են իրենց քաղաքական դեբատները, սակայն Ռուսաստանի թեման դեռևս լրջորեն չի շոշափվել, ինչը վկայում է այս երկրի հետ հարաբերությունների հարցին Միացյալ Նահանգների քաղաքական էլիտայի վերաբերմունքի մասին:

Սակայն Մոսկվայում չափազանց ուշադիր են հետեւում ամերիկյան քաղաքական դաշտի տատանումներին եւ շատ նախանձախնդիր վերաբերմունք դրսեւորում իրենց նկատմամբ ուշադրության պակասի հանդեպ: Ամերիկյան մասնագետները սկսել են հասկանալ ոչ միայն այս մտահոգությունների պատճառները, այլ նաև այն լուրջ դրական դերը, որը Մոսկվան կարող է կատարել Աֆղանստանի, Իրանի, Յուսիսային Կորեայի հետ կապված խնդիրներում, ահաբեկչական ցանցերի դեմ պայքարում եւ այլն: Սակայն, մյուս կողմից, նրանք նաև լավ գիտակցում են, որ ՌԴ-ի հետ ավելի սերտ համագործակցությունը կարող է հանգեցնել նրան, որ ռուսական ազդեցության գոտիներն ընդլայնվեն, իսկ Մոսկվան

ձեռնամուխ լինի իր ինքնուրույն քաղաքականության իրականացմանն այն տարածաշրջաններում, որտեղից դուրս էր մղվել Խորհրդային Միությունը: Այս կարելու հանգամանքը նորից եւ նորից ստիպում է ամերիկյան քաղաքականության ծրագրավորողներին վերադառնալ սառը պատերազմի ավարտից հետո արձանագրված արդյունքներին եւ շարունակել անտեսել ՌԴ շահերը՝ խուսափելով միայն միջուկային զենքի հազարավոր միավորներ ունեցող երկրում անկայունությունից: Որպես երկարատեւ քաղաքականության հիմք՝ այս մոտեցումը, անշուշտ, անընդունելի է ոչ միայն Ռուսաստանի, այլեւ հենց իրենց՝ ամերիկացիների համար: Թվացող փակ շրջանից ելքերը նույնպես պարզ են, սակայն պահանջում են շատ ավելի լուրջ քաղաքական պոտենցիալ, քան այն, ինչ այսօր առկա է:

Զնայած դեռեւս անցած դարի 70-ական թվականներին գերիշխող դարձավ այն կարծիքը, թե «գաղափարախոսությունն իր մահկանացուն կնքել է» եւ համաշխարհային քաղաքականության միակ շարժիչ ուժը իրական շահերն են, սառը պատերազմի ավարտին հետեւած բոլոր իրադարձությունները վկայում են այն մասին, որ առանց հստակ գաղափարախոսության եւ այն արտահայտող իդեոլոգեմների՝ չափազանց դժվար է արտահայտել եւ դրսեւորել ոչ միայն պետական, այլ նաեւ խմբային շահերը:

Այն գաղափարախոսությունը, որն առաջ էր մղում Միացյալ Նահանգների շահերը, հիմնված էր «ժողովրդավարություն» իդեոլոգեմի վրա: Կարելի է ենթադրել, որ ամերիկյան ինտելեկտուալներն իրոք մտադիր էին արմատավորելով ժողովրդավարական մոդելն ամբողջ աշխարհում, դարձնել այն ավելի կանխատեսելի եւ կառավարելի: Սակայն հենց ամերիկյան հասարակության ներսում ժողովրդավարությունը ոչ այնքան իդեոլոգեմ է, որքան սոցիալական կանոնակարգման եւ կարգավորման գործիք: Ձգտելով արտահանել այս կաղապարը՝ ամերիկյան քարոզչական մեքենան այդ սոցիալական գործիքը վերածեց ինչ-որ գերբնական փրկության միջոցի, դիցաբանական համակարգի հիմնական միֆոլոգեմի, որն իրականացվում է ոչ այնքան գործառույթների, որքան ծիսակատարությունների միջոցով:

Ռուսաստանում խաղի կանոններն ընդունվեցին, ծիսակատարություններն ընտրությունների եւ այլ ժողովրդավարական գործառույթների իմիտացիայի միջոցով կատարվեցին: Հարցն այն է, որ այդ ամենից հետո եւ այդ ամենի արդյունքում նպատակ կա հատուցում ստանալու՝ պարտվողների շարքից դուրս գալով եւ, որպես հետեւանք, իրական քաղաքական եւ տնտեսական դիվիդենտներ ստանալով:

Այստեղ Real politic-ը եւ դիցաքաղաքականությունը հստակ հակասութեան մեջ են մտնում: Ասելով, որ ռուս-ամերիկյան հարաբերությունների զարգացմանը խոչընդոտող հիմնական արգելքներից մեկը Կրեմլի կողմից իրականացվող ներքին քաղաքականությունն է, ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը ոչ թե փորձում է Ռուսաստանում ժողովրդավարության պակասը որպէս ճնշման միջոց օգտագործել պուտինյան վարչակազմի նկատմամբ, այլ իրոք հավատում է, որ Միացյալ Նահանգներն իրավունք ունի խառնվելու Ռուսաստանի ներքին գործերին, որպէսզի թույլ չտա «ավտորիտար կապիտալիզմի» (այսպէս են բնութագրում ամերիկյան մասնագետներն այն քաղաքական համակարգերը, որոնք հաստատվել են Ռուսաստանում եւ Չինաստանում) ամրապնդումը:

Գրեթէ նույն մտայնությունն է իշխում ռուսաստանյան քաղաքական սերունդի ներկայացուցիչների մոտ, երբ նրանք շրջանառության մեջ են դնում «սուվերեն ժողովրդավարություն» հասկացությունը, որն իր էութեամբ փոխզիջումային լինելով («մենք ժողովրդավարություն ենք, ինչպէս որ պահանջվել է, սակայն փոխարենը դուք պետք է համաձայնեք մեր սուվերենությանը»), իրականում արտահայտում է այդ սերունդի ձեւավորվող մտայնությունը՝ անկախ եւ անկաշկանդ շահույթներ ստանալու: Այս իմաստով՝ որքան ավելի ազնիվ է «լիբերալ կայսրություն» բնորոշումը:

Եզրափակելով՝ կարելի է կանխատեսել, որ չնայած հաջորդ տարի Սպիտակ տունը նոր տեր կունենա, որը ստիպված կլինի որոշակիորեն սրբագրված մոտեցումներ դրսեւորել ռուս-ամերիկյան հարաբերությունների վերաբերյալ, սակայն այդ հարաբերությունների էությունը պայմանավորող աշխարհայացքային եւ գաղափարական հակասությունները թույլ չեն տա, որպէսզի փոխադարձ վերաբերմունքի բնույթը զգալիորեն փոխվի:

## ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

«Պատերազմի վտանգ. ժողովրդավարական աշխարհի ապացույցների վերագնահատում» գրքի (տպագրվել է 1997թ.) հեղինակներ, հետազոտողներ Արվիդ Ռաքներուդի եւ Հովարդ Էգրեի հաշվարկներով՝ 1840–1992թթ. ժամանակահատվածում կառավարման ժողովրդավարական ձեւ ունեցող երկու առանձին վերցրած երկրների միջեւ կոնֆլիկտների առաջացման հավանականությունը 57 տոկոսով ցածր է եղել, քան ավտորիտար ու ժողովրդավարական վարչակարգ ունեցող երկու երկրների միջեւ, եւ 35 տոկոսով ցածր, քան երկու ավտորիտար երկրների միջեւ ռազմական դիմակայության առաջացման հավանականությունը: Որոշ ուսումնասիրություններ կասկածի ենթարկեցին սույն հաշվարկները՝ վկայակոչելով «ժողովրդավարական վարչակարգ» եզրի սահմանման պայմանականությունը, «ռազմական կոնֆլիկտ» հասկացության ոչ ճիշտ մեկնաբանությունը եւ այլն: Ամեն դեպքում, կարծիքը, որ ժողովրդավարական երկրները հակված են միմյանց հետ ապրել խաղաղությամբ, լայն տարածում ունի:

Այդուհանդերձ, այն կարծիքը, թե ժողովրդավարությունը նպաստում է ժողովրդավարական երկրների միջեւ առավել խաղաղ գոյակցությանը, վերջին ժամանակներս քննադատության է ենթարկվում: Ինչպես հիմնավորում է Ինդիանայի համալսարանի պրոֆեսոր Ուիլյամ Թոմպսոնը իր «ժողովրդավարությունը եւ խաղաղությունը. ձին լծելով սայլի հետեւից» ուսումնասիրությունում, եթե անգամ վիճակագրական տվյալները վկայում են ժողովրդավարական երկրների միջեւ ռազմական կոնֆլիկտների փոքր քանակի մասին, պարզ չէ պատճառահետեւանքային կապը երկրում ժողովրդավարական համակարգի ու խաղաղության միջեւ: Անհասկանալի է՝ նպաստո՞ւմ է, արդյոք, ժողովրդավարական վարչակարգը խաղաղ գոյակցությանը, թե՞ հակառակը՝ պատերազմի բացակայությունը թույլատրում է պետություններին զարգացնել ժողովրդավարությունը:

Նիլս Գլեդիշը, Լին Քրիստիանսենը եւ Հովարդ Էգրեն իրենց «ժողովրդավարական ջիհա՞դ. ռազմական ինտերվենցիան եւ ժողովրդավարությունը» հետազոտությունում նշում են, որ այսօր աշխարհի երկրների ավելի քան 40 տոկոսը, որտեղ ապրում է երկրագնդի բնակչության 50 տոկոսից ավելին, դասվում է «ժողովրդավարական պետություններ» կատեգորիային: Այնուամենայնիվ, ժողովրդավարու-

թյան ուղին եղել է անհարթ ու ալիքաձեւ, եւ հաճախ երկրները գլորվել են հետ՝ դեպի ավտորիտար կամ կիսաավտորիտար վարչակարգեր, որպէսզի որոշ ժամանակ անց կրկին վերադառնան կառավարման ժողովրդավարական ձեւին: Ժողովրդավարական սկզբունքներից հեռանալու առաջին գլոբալ միտումը սկսվեց 1920-ական թվականներին՝ Եվրոպայում տոտալիտար վարչակարգերի առաջացմամբ: Երկրորդ հոսանքը սկսվեց այն շրջանում, երբ Երրորդ աշխարհի երկրներն իրենց նախկին մետրոպոլիաներից ստանալով անկախութուն՝ չկարողացան ստեղծել իրապէս գործող ժողովրդավարական հասարակություն: Ինչպէս գրում են հեղինակները, չնայած ծայրաստիճան անհանգստութեանը, «հետընթացի» երրորդ՝ գլոբալ ապաժողովրդավարացման փուլի մոտենալուց առայժմ հաջողվում է խուսափել:

Սոցիալիստական ճամբարի փլուզումից հետո ժողովրդավարության գաղափարը գործնականում մնում է պետական կառավարման միակ գլոբալ գերիշխող մոդելը: Ու թեւէ Չինաստանը, ինչպէս գրում են հեղինակները, մինչ օրս հանդիսանում է ավտորիտար պետություն եւ քարոզում է պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, իրականում չինական տնտեսական քաղաքականությունն ավելի շուտ վկայում է նրա ազատական ուղղվածության մասին:

Ուսումնասիրողները համաձայնում են, որ պատերազմների շրջանում անվտանգության գործոնը ստանում է առաջնային նշանակություն՝ բոլոր մյուս ներքին գործոնների համեմատ, այդ թվում նաեւ մարդու իրավունքների պաշտպանության եւ խոսքի ազատության ոլորտում: Որոշ դեպքերում պատերազմները եւս կարող են հերթական ժողովրդավարական ընտրությունների հետաձգման պատճառ դառնալ, ինչպէս, օրինակ, Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Մեծ Բրիտանիայում խորհրդարանական ընտրությունների հետաձգման դեպքը: Բացի այդ, որպէս հասարակության ժողովրդավարացման գործընթացների վրա ռազմական կոնֆլիկտների բացասական ազդեցության օրինակ կարող է ծառայել 1960-ական թվականներին Հունաստանի ու Թուրքիայի փորձը: Այնուհանդերձ, ժողովրդավարական երկրների մեծ մասն ավտորիտար վարչակարգի չանցավ պատերազմների եւ միջպետական կոնֆլիկտների պատճառով՝ կարողանալով պահպանել ժողովրդավարական պետության բոլոր խորհրդանիշները:

Փորձը ցույց է տալիս, որ թեւէ ժողովրդավարական երկրներն իրենք հազվադեպ են սկսում պատերազմներ, դրա փոխարեն, շատ հաճախ, ռազմական գործողությունների զարգացմանը համապատասխան,

ներքաշվում են կոնֆլիկտներում: Ընդ որում, ժողովրդավարական պետությունները շատ հաճախ հայտնվում են հաղթողի կողմում: Որպես օրինակ են բերվում Առաջին ու Երկրորդ աշխարհամարտերը, Կորեայի, Պարսից ծոցի (1991թ.), Կոսովոյի (1999թ.), Աֆղանստանում թալիբանի վարչակարգի հետ (2001թ.) եւ Իրաքի (2003թ.) պատերազմները: Որպես ժողովրդավարական վարչակարգերի կայունության հաստատում՝ հետազոտողները մեջբերում են ԱՄՆ փորձը, որտեղ ինչպես Դեմոկրատական, այնպես էլ Չանրապետական կուսակցությունն ընտրություններում պարտություն կրեցին՝ Վիետնամում 1968 եւ 1975թթ. կորուստների համար, բայց դա ամենեւին էլ երկրում չհանգեցրեց ավտորիտար կամ կիսավտորիտար վարչակարգերի:

Առաջին աշխարհամարտում ավտորիտար վարչակարգերով երկրների պարտությունը (Գերմանական, Չաբսբուրգյան եւ Օտոմանյան կայսրություններ) խթանեց ժողովրդավարության գաղափարի գլոբալ զարգացման առաջին ալիքը, այնպես, ինչպես նացիստական Գերմանիայի ու ճապոնիայի պարտությունը Երկրորդ աշխարհամարտում: Ժողովրդավարության զարգացման երրորդ ալիքը սկսվեց սառը պատերազմի ավարտից հետո: Այսպիսով, ինչպես գտնում են հեղինակները, վերոհիշյալ պատմական իրադարձությունների վերլուծությունը շատ վերլուծաբանների կարող է բերել այն գաղափարին, թե ժողովրդավարությունը կարելի է եւ նույնիսկ ցանկալի է տարածել ռազմական միջամտության օգնությամբ:

Գլեդիշը, Քրիստիանսենը եւ Էգրեն հաշվարկել են, թե ինչ հաճախականությամբ են ժողովրդավարական երկրները ներխուժել այլ պետությունների տարածքներ: Վերլուծելով 1960-1996թթ. ռազմական ինտերվենցիաների դեպքերը՝ հեղինակները բացահայտել են, որ տվյալ ժամանակաշրջանում առաջատարն ԱՄՆ-ն է (63 ինտերվենցիա): Երկրորդ տեղում ՄԱԿ-ն է (45), այնուհետեւ գալիս են Ֆրանսիան (41) ու Մեծ Բրիտանիան (25): 1990-ական թվականներին բոլոր ռազմական ինտերվենցիաների ավելի քան 2/3-ը բաժին է ընկնում ժողովրդավարական երկրներին. այդպիսով՝ հեղինակները սահմանում են, որ ժողովրդավարական երկրներն առավել հակված են ինտերվենցիաների:

Գլխավոր հարցին՝ «ժողովրդավարության տարածման նպատակով ռազմական ինտերվենցիան բերո՞ւմ է, արդյոք, նվաճված երկրի իրական ժողովրդավարացման», հեղինակները տալիս են հաստատող պատասխան: Ինչպես փաստում են հեղինակները, մանրակրկիտ վերլուծությունը վկայում է ներխուժման եւ նվաճված պետությունների

հետագա ժողովրդավարացման միջև թույլ, բայց եւայնպէս՝ դրական կոռելյացիան: Հեղինակների կարծիքով, ավտոկրատ վարչակարգերի դեմ կետային ռազմական գործողությունների զգույշ ու նպատակասլաց անցկացումը կարող է զգալիորեն նվազեցնել ցեղասպանության, քաղաքական եւ էթնիկ զտումների դեպքերը, փոքրացնել քաղաքացիական պատերազմների ծագման հավանականությունը:

Էկոնոմիկայի լոնդոնյան դպրոցի պրոֆեսոր Մերգոթ Լայթը «ժողովրդավարության արտահանում» հոդվածում նշում է, որ 1912–1932թթ. ժամանակահատվածում ԱՄՆ-ը ժողովրդավարության տարածման նպատակով Արեւմտյան կիսագնդում անցկացրել է առնվազն 40 ռազմական ինտերվենցիա՝ դրանով ցույց տալով, որ ռազմական ճանապարհով ժողովրդավարության տարածման գաղափարն ԱՄՆ իշխող շրջանակներում ամենեւին էլ նորություն չէ: Նախագահներ Վուդրո Վիլսոնը եւ Ֆրանկլին Ռուզվելտը համապատասխանաբար Առաջին ու Երկրորդ աշխարհամարտերի մեջ մտան հիմնականում աշխարհում ժողովրդավարության պաշտպանման եւ տարածման նպատակով:

Անշուշտ, նկատում են հեղինակները, ամերիկյան ռազմական միջամտության դեպքում իրականում բավական դժվար է պարզել ինտերվենցիայի բուն պատճառները: Հանդիսանում է, արդյոք, ժողովրդավարության տարածումն այլ երկրների դեմ ռազմական գործողությունների սկսման իրական խթան, թե՞ այդ վերամբարձ խոսքերի տակ քողարկվում են այլ խնդիրներ, ինչպիսիք են ամերիկյան քաղաքացիների եւ կորպորացիաների պաշտպանությունը, ԱՄՆ նավթի մատակարարումների անվտանգության ապահովումը եւ այլն: Հեղինակները պնդում են, որ եթե նույնիսկ ժողովրդավարության տարածման գաղափարը շղարշ է հանդիսանում ինչ-որ քաղաքական կամ տնտեսական շահերի հասնելու համար, շատ դեպքերում նվաճված երկիրն իրականում սկսում է զարգանալ ժողովրդավարական ուղղությամբ:

Բնականաբար, կա վտանգ, որ ժողովրդավարական երկրների առաջնորդները, տվյալ դեպքում, աշխարհի ցանկացած երկրի դեմ, որին իրենք համարում են ավտորիտար, ռազմական գործողության անցկացման ազատություն կստանան: «ժողովրդավարության արտահանում» հասկացությունն օգտագործում է ոչ միայն ԱՄՆ-ը: Եվրոպական միությունը, ինչպէս նաեւ ՆԱՏՕ-ն եւս հետապնդում են ժողովրդավարության տարածման նպատակներ: Ու թեւ սառը պատերազմի ժամանակաշրջանում ՆԱՏՕ անդամ արեւմտյան երկրները հաճախ էին

փակում աչքերն ավտորիտար վարչակարգերի եւ տարբեր երկրներում մարդու իրավունքների ոտնահարման վրա (օրինակ, Թուրքիայում ու Պորտուգալիայում՝ սոցիալիստական ճամբարի դեմ պայքարում նրանց աջակցությունը ստանալու նպատակով), սոցիալիստական համակարգի փլուզումից հետո ժողովրդավարական սկզբունքների պահպանման պահանջները զգալիորեն խստացան:

Ելի համալսարանի պրոֆեսոր Բրյուս Ռեսեթը գտնում է, որ ողջ աշխարհում ժողովրդավարության բռնի արմատավորումն իրեն չի արդարացնում: Ինչպես նշում է Ռեսեթը, նման փորձերը հաճախ ավարտվել են պարտությամբ, իսկ «ժողովրդավարացվող» երկրները կրում են ահռելի վնաս: Քաղաքագետ Մայքլ Ուորդը նշում է, որ ռազմական «ժողովրդավարական» ինտերվենցիաների ելքը դժվար կանխատեսելի է, ու եթե երկիրը գտնվում է ոչ ժողովրդավարական պետությունների հարեւանությամբ, ապա այդ երկրի ժողովրդավարացման հավանականությունը մեծ չէ:

**Washington ProFile**

**26.10.2007**



# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գազիկ Տեր-Հարությունյան ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ .....	1
Ռուբեն Մելքոնյան ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅԵՐԻ ԽՆԴՐՈՒՄ .....	4
ԹՈՒՐՔ ԳՐՈՂԸ ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ( <i>հարցազրույց Քեմալ Յալչընի հետ</i> ) .....	11
Արման Հակոբյան ՄԱՅՍԵԴԱԿԱՆ ՀՈՒՅՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ .....	16
Սարգիս Հարությունյան ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ .....	20
Սեւակ Սարուխանյան ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ .....	26
Դավիթ Հովհաննիսյան ՌՈՒՄ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ .....	31
ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ .....	36

*Շապիկի վրա պատկերված է  
տեսարան Մոկս-Շատախ լեռնանցքից.  
հեռվում` Լճան գյուղը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երևան, 375010, Սելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ` hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր` Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը` օֆսեթ, ֆորմատը` 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը` 1000:  
Տառատեսակը` «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական` Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: